

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐԹԱԿԱՆ.	Հատուածներ իմ Յիշատակարանից.....	Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՅ
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ.	Վիթոր Նիւկո.....	Ս. Դ.
ՊԱՏՄԱԿԱՆ.	Հիմնադրութիւն Ֆրանսական Ազգութիւնի.....	Վ.ՏԱՐԱՆԳԻՒՆ
ԳԱՒԱՌԱՅ ՎԻՃԱԿԸ.	Եղգատ.....	Հ. ԷԿԵՆԵԱՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ.	Աղէկ աղջիկը (յԱՆԸԳ ՇԵՐԻՆԷ ասացեալ).....	Յ. ՏՈՒՏՈՒԽԵԱՆ
ԳԱՒԱՌ. ՍՈՎՈՐՈՅԹԻ Նախապաշարուններ ի Ղուլթիկ գիւղ.....	Հաւաքեց.....	Մ. ՉՕՊԱՆԵԱՆ
ՔԱՂՈՒՄԾ ՇԱԲ. ԼՐՈՅ Արտաքին, Ներքին, Ազգային.....		
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. Կղզիէ տը Մոլթէքէն) Թարգմ.....		

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ.....	տարեկան.....	Կէս ոսկի Օսման.
».....	վեցամսեայ.....	Քառ » »
Գաւառներ.....	տարեկան.....	Կէս » »
Օտար քաղաքներ.....	».....	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք ».....	».....	15 դան. արծաթ
Մէկ թերթին ԳԻՆՆ Է.....	».....	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛րեւէ գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն, Արեւելք, Մասիս Իրադրաց
Ղալաթիս, Նորաստիկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ԳՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 6 Յունիս

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ պանքայի		444
3 » » » (վճռակն)	440	5/8
3 » Բարիլի » (պանքայի)	22	77 1/2
3 » » » (վճռակն)	22	85

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Գոնսոլիտի

Դաճեկան

Երեկ երեկոյ Գոն.	(Միաց. D. Սէրի	48	26
Պորսային գոնուեղէն վերջը	»	48	25 1/2
Բերայի մէջ	»	—	—
Առաւօտուն բացուեցաւ	»	48	25
Բարձրագոյն Գոն.	»	48	25
Նաւազագոյն »	»	48	23
Կէս օրին	»	48	23 1/2
Փոխառութիւն 1858)	A. Սէրի Գ. Կ. Ա. Ո.	33	40
» 1862)	»	»	»
» 1860)	»	»	»
» 1863) B. »	»	»	»
» 1872)	»	»	»
» 1865)	»	»	»
» 1869) C. »	»	»	»
» 1873)	»	»	»

ԻՆԻՖՈՐՄԱՆ ԵԳԻՊՏԱԿԱՆ

Երեկ երեկոյ գոնուեցաւ		74	27 1/2
Այս առաւօտ բացուեցաւ Գ. Կ.		71	27 1/2
Կէս օրին		74	27 1/2

ԲԱԺՆԵՏՈՐՍՔ

Սօրիւթէ Ժեներալ		Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3	48
Քրէտի Ժեներալ		» » Օսմ. »	7	7
Պանք տը Գոն.		» » » »	4	30
Սօս. Նանթ է Վալէօր		» » » »	3	30
Թրամաւէյ		» » » »	282	1/2
Բուժելի երկաթուղի		Ֆր.	43	
Օպիկաւիօն տը Բրիտիլի		»	—	
Բաժնեթուղթ Լաւրիօմի		»	60	

ԸՆԲԱՅՔ ՂՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի		գրչ.	...	400
Օ Ֆրանքոն		»	...	87 28
Անգլիական ոսկի		»	...	440 48
Բօլ Իմպերիալ		»	...	90 8
Քրիմից		»	...	51 42
Ռուսի թղթադրամ		»	...	8 89
» արծաթ		»	...	89 30
Ֆիօրին		»	...	9
Մէք. արծ. (տարբ.)		»	...	408 4
Վեցնոց		»	...	403

Հինգնոց		»	...	103
Մէթալիք		»	...	98 30
Պղինձ		»	...	—
Թղթադրամ		»	...	—

ԵՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 17 Յունիս, ժամ 5 վայր. 15 Երեկոյ

Անգլ. քոնսոլիտ		99	5/4
Օսմ. » Սէրի Գ. Բացուեցաւ		47	1/16
» » » Գոնուեցաւ		47	
» » » Ա.		33	1/2
» » » Բ.		49	1/8
» » » Գ.		47	
Օթօման 1874		67	1/2
Փոխառութիւն 1877		80	1/4
Պանք Օթօման		42	1/4
Ռուսական փոխառ. 1873		92	5/8
Եգիպտական միացեալ (Եւրիֆիէ)		64	3/4
» առանձն. (Երիվիլէֆիէ)		86	1/2
Տայրա Սանիէ		62	
Տօմանիալ (փոխառ. Բօչիլտ)		84	1/4
Հունգարական պարտաթուղթ 40/0		—	
Փոխանակութիւն Բարիլի վրայ		—	

Վ. Իէննա, 17 Յունիս, ժամ 4 Երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ		124	50
Օսմանեան երկաթուղի		24	

Բարիլ, 17 Յունիս, ժամ 3 վայր. 45 Երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0		440	07 1/2
» » 3 0/0		81	40
Օսմանեան քոնսոլիտ Սէրի Գ. Բացուեցաւ		47	20
» » » Գոնուեցաւ		47	07 1/2
» » Սէրի Բ.		49	
» » Գ.		47	
Օսմանեան երկաթուղի		43	
» Իէֆիլի բաժնեթուղթ		—	

Պանք Օթօման		559	37 1/2
Գրէտի Լիօնէ		536	25
» Ֆրանսիէ		1365	
Բաժնետոմս Լիօնի		—	
Սուէզի ջրանցք		2150	
Ռուսական 5 0/0 1877		460	1/4
Իտալական Ռանթ		97	20
Եգիպտական միացեալ		326	25
Սպանիական (արտաքին)		59	7/16
Բրիտիլի թղթադրամ		392	50
5 0/0 Հելլենական		338	75
Զէք Լոնտրայի վրայ		25	20

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա.Զ.Գ.ԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34 ԴՐ ՏԱՐԻ

1885 ՅՈՒՆԻՍ 7

ԹԻԻ 3773

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 7 ՅՈՒՆԻՍ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ
ԻՄ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՅ

Այս վերնագրով ես հանդէս պիտի բերեմ Մատենադարանի մէջ երբեմնակի կարեւոր քաղաքական մի ժողովածուից, որ բաղկացած է իմ գրեթէ ամենօրեայ մանկավարժական ու հոգեբանական դիտողութիւններից մանուկների վրայ: Իմ գործունէութեան հինգ երկար տարիները դոյացուցին իմ մէջ այն վճռական համոզումը, թէ կրթիչ լինել եւ ամենօրեայ ֆիլատախարան չունենալ՝ փորձերից օգուտ քաղել, զոհերից խրատուել չ'ուզենայ է: Եւ այս ոչ միայն հասարակ կրթիչի, այլ նոյն իսկ մասնագէտ հոգեբան-մանկավարժի անհրաժեշտ կարիքն է, զի այդ գիտութիւնները դեռ չափ յետամնաց վիճակի մէջ են ցարդ:

Ահա սակ Վանի մէջ ինձ հանդիպած անկարգ դաստարաններից մինի աստիճանական կերպարանափոխութիւնը շնորհով իմ գրաւոր հաշուետուութեան:

15-ին «Եպիֆանիայի» թիւ ցոյց տուած դիւրագրութիւնը դասի սկիզբից եւ պահանջած բացատրութեան (ընդհանուր բաժանարարի վրայ) աշակերտների չարչարանքով տուած անհամ պատասխանները բոլորովին փշաջուցին դործս: Այդ դէպքը ինձ շատ նպաստեց աւելի մօտ ճանաչելու մի քանի տղաներ: Զարմանալի էր Ա.ի յարաբերութիւնը դէպի ինձ. հեղնախառն նեղ-

սրտութիւն իր գիտցածներին չը հաւանելու համար: Առաջին անգամն էր որ Ա.ը իջնում էր իր բարձրութիւնից եւ այդ նրա համար անտանելի ու անհասկանալի էր: Ի.ին շատ անհաճոյ էր Ա.ի վարմունքը. իր հայեացքներով ո՛րչափ աշխատում էր սարկեշտ տղան իր ըմբոստ ընկերակիցը յարգանքի հրաւիրելու համար: Գ.ը չէ կարողանում զսպել իր տղայութիւնը. յորմէ հետէ ես սկսեցի նրա հետ առաջնականից աւելի խիստ վարուել նրա նեղսրտութիւնը օրէց օր աւելի մեծ չափեր արեց: Այսօր նրան դասարանից հանելը հաւանականօրէն մեր յարաբերութիւնները վճռորոշէր դէպի լաւը կամ դէչը պէտք է մղէ: Այսօրուայ օրը նշանաւոր էր եւ ուրիշ երեւոյթներով:

Այդ դասարանի մէջ, որ բաղկացած էր 12-17 տարեկան քսանի չափ շատ անկարգ աշակերտներից, ես սկսած էի իմ թուաբանութեան դասերը նշանակեալ ամսաթիւից բանի մի շարքի առաջ: Բայց շարունակե՛նք.

18-ին «Եպիֆանիայի» թիւ ցոյց տուած դիւրագրութիւնը, որ անսպասելի էր անցեալ դասի գէշ տպաւորութիւնից յետոյ: Գ.ը գուշակածիս համեմատ դէպի լաւն էր փոխւել. այլեւս երկիւղ չունիմ ըստ երեւութիւն ասպագայի համար. ուրեմն նրան ծանր թըւեցաւ ինձ ընդ միշտ վշտացնել: Ա.ը մի անգամ փորձեց իր նոր յատկութիւնը ցոյց տալ (ըմբոստութիւն, որ առաջ վարագուրւած էր), բայց իմ բաւական ծանր յանդիմանութիւնը ուղքի բերեց նրան: Մեծ նըշանակութիւն ունեցաւ ինչպէս Գ.ի, նոյնպէս եւ ամբողջ դասարանի համար այս խօսքերը. «Ես շատ կը հաւանիմ Դ.ին ոչ

միայն նրա լաւ սովորելու, այլ եւ կրթիչի հետ օրինաւոր վարեւել գիտնալու համար, առանց երբէք նեղարտութիւն ու ինքնահաւանութիւն ցոյց տալու (որ այդ դասարանի գլխաւոր յատկանիշներէն մէկն էր)։ Ազգու էր նոյնպէս այդ տղային նմանողներին անունները յիշատակելը։ Ա.ի անունը որովհետեւ այդ միջոցին չարտասանւեցաւ, արագութեամբ նկատեցի նրա հեգնական ժպիտը, որ աշխատեց չուտով զսպել։ Շատ ծանր էր նրա համար այդ բոլորէն։ Եւ վերջապէս մաքրել էր իր ձեռքերը աւազով... (որ շարունակ աղտոտ էին սապոն չունենալու պատճառով)։ Զարմանալի էր Զ.ի համբերութիւնը իմ թէեւ համեմատ, բայց շատ խիստ յանդիմանութեան համար։ Վերջապէս այս օրուայ դասը նշանաւոր էր իմ հեղինակութեան արտասովոր զօրութեամբ, անցեալ անյաջող ժամից յետոյ։»

Խնդրում եմ ընթերցողից այս կեղծ անունները մինչեւ վերջը համեմատել իրար հետ, որ նոյնութեամբ պիտի պահուին։ Մութ տեղերը կաշխատիմ պարզել փակագիծներով։

29-ին «Եպիսկոպոս»։ « * * * դասարանը կարծես թէ ուղիղ ճանապարհի մէջ ընկաւ յաջողութեան շարունակութիւնը կատարեալ էր։ Ա.ը բաւական ուղղել էր, Գ.ը աւելի մեղմացել։ Նշանաւոր էր Զ.ի միջադէպը։ Վերջին դասի ծանր յանդիմանութիւնից յետոյ, այսօր նա դարձեալ ներկայանում է որպէս գիշտիչ, իր սպառնական եղունգներով, քանի մի աշակերտներին։ Նա շատ ճարպիկութեամբ արդարացուց զինքը, ասելով թէ երբ ինքը ինքնապաշտպանութիւնից զուրկ ճանաչուի ընկերակիցների առաջ՝ պէտք է շատ հարուածուի։ Հաստատ գիտեմ որ այդ թիւրիմացութիւնն չէր. ես աշակերտների ներկայութեամբ պատելիք էի որ փոքր ինչ միայն համբերութիւն ցոյց տայ (երբ իրեն կը դիպչեն), որպէս զի յանցաւորը աւելի խիստ պատժուի։ Տեսնենք թէ ինչպէս պէտք է վերաբերուի այսուհետեւ իր կրկնած խոստման՝ իմ սպասուէրը ճշդութեամբ կատարելու համար։ Ես այսօր ամենեւին նրան յանդիմանութիւնն չ'արի աղացուցանելու համար իր ընկերակիցներին թէ թիւրիմացութիւնը յարգելի է։»

Խնդրում եմ առանձին ուշադրութիւն դարձնել այս Զ. կոչուած տղայի վրայ։

22-ին «Եպիսկոպոս»։ «Գարձեալ լաւ էր. (այս լաւը պէտք է հասկանալ աշակերտների անկարգութեան համեմատ)։ Հաջորդաբար էր իմ այսօրուայ ցոյց տուած Գ.ի (մանկավարժական շնորհ) . ստէպ ստէպ արած իմ անակնկալ նկատողութիւնները շատ մը տածել էին տալիս հասկացողներին իրենց նոր կրթիչի տարօրինակ բնաւորութեան վրայ. տեսանելի էին լուրջ դոհուակութեան նշաններ, բայց ոչ ի հարկէ մեծագոյն յանցաւորների վրայ։ Օրինակ, շատ ազգու էր «Համբերիր, Գ.ը աւարտէ իր կարգալը (դադունի, սեղանի տակ), յետոյ կը շարունակես» նկատողութիւնը, որ խիստ խղճահարութիւն առաջացուց մշտաժպիտ Գ.ի մէջ։ Նոյնպէս էին նաեւ Է.ին, Ը.ին, Ա.ին, Ե.ին եւ այլն արած դիտողութիւնները։ Բայց աւելի արդիւնաւոր էր հետեւանքը իմ այն յայտարարութեան, թէ ես ամեն կրթարանի մէջ (Վան բաղաբում) երկու ամիս շատ չարչարել եմ աշակերտներին եւ երբ նրանք ինձ չեն համակերպել՝ ձգել եմ անմիջապէս։ Այսուհետեւ մեծ յոյս ունիմ այս տաղաւորութեան ինձ նպաստաւոր հետեւանքների վրայ։ Առհասարակ այս բոլոր յաջող տաղաւորութիւնների դադունիքը կայանում էր այսօր իմ խօսելու առանձին ձեւի, ձայնի արտայայտութեան եւ տրամադրութեան մէջ, որ շատ քիչ է պատահում սովորական դասերի մէջ։ Այդպիսի բոլորները խոր, անջինջ հետքեր են թողնում աշակերտների հոգու մէջ։ Զ.ի սաստիկ կռուասէր լինելը ծածուկ դիտում եմ այն ժամանակ, երբ մի տղայ նրան ամենաթեթեւ նկատողութիւն անգամ անէ. կարծես ամբողջ մարմնով պէտք է պայթի այդ վայրկենին, եթէ դէթ մի բառով չը կարողանայ ուժակոծել իր հակառակորդին։ Սրմտատախիլ անել նրանից այդ գօրեղ մոլութիւն՝ հակայական դուրձ ուրիշ լինի մի կըրթիչի համար։ Տակաւին ես հակուած եմ պնդելու իմ ապագայ յաջողութեան վրայ։ Ա.ը այսօր աւելի լաւ էր, թէեւ մի անգամ դարձեալ դուրս հանեց իր նոր յատկանիշը։ Գ.ը այսօր աւելի մեղմ եւ դիմացկուն էր։»

Սակայն հետագայ արձանագրութիւն-

զարմանալի դուգադիսութեամբ, չեն կամեցել հեռանալ քիս տակից :

«Այս առաւօտ վերջնականապէս հանեցի այն եզրակացութիւնը, թէ զիտեմ կարգի բերել շատ անկարգ, տարիներով խանգարուած տղայներ : Այս՝ իմ հնդամեայ դործունէութեան փառաւոր յաղթանակն է. եւ ես դժբաղդութիւն չունիմ ասելու, թէ ժամանակը ոսկի է՝ պէտք է մի բան կորզել նրանից» :

Այդպէս է ահա՛, իմ յարգելի պաշտօնակիցներ, համառօտ պատմութիւնը այն դասարանի, որ պահ մի այնչափ վիշտ եւ մտահոգութիւն պատճառեց ինձ, վիշտ եւ մտահոգութիւն՝ որոց աւերակների վրայ այսօր բերկրանք ու սրտի անդորրութիւն են տիրապետում : Ես դրեցի շատ համառօտ, զի Մաֆի անձկութիւնը ստիպեց ինձ շատ կրճատումներ ու թուոյցներ անել այս «Հատուածներին» մէջ : Սակայն ես լիայոյս եմ թէ այդչափով իսկ կարող եղայ իրենց հրաշքերէն էական պատճառները շօշափելի կացութեանը : Մի՛ կրկնէք շատերի հետ, թէ հրաշքի դարն անցած է. այդ՝ «էք, կա՞ծ» ասուածքներն են : Այս դասը իմ փորձառութեան ամենօրեայ արդիւնքն է :

Բայց իմ Հողերանական Յիշատակարանը, ինչպէս այդ կը տեսնեն մեր կրթիչները իմ ապագայում հրատարակելիք «Հատուածներին», մի միայն խանգարուած աշակերտների կերպարանախոսութեան չէ նուիրուած : Ես նշանակում եմ այնտեղ, դրեթէ ամէն օր, այն ամէնը, ինչ որ մանկան հոգու եւ բնաւորութեան կռիւն է արտայայտում : Այդ է պատճառն որ Յիշատակարանս լեցում է հետզհետէ տղաների հանճարի, սրամտութեան, կատակաբանութեան, տրամաբանական սխալների, մտեմական բնազդման, սրտի քնքշութեան եւ կոպտութեան, սեռական մոլութեան եւ նրանց հազար ու մէկ վիթխարի յատկանիշների խայտաճամուկ երեւոյթներով :

Այսպէս, զատահելով պատեղի պաշտօնակիցներին բարեւտութեան՝ այժմէն իսկ կ'առաջարկեմ. խնայե՛ք ձեր հոգիները Գարեգինի ֆէն է Յիշատակարանն ինչպէս :

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՅ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՎԻՔԹՈՐ ՀԻԿՈ

Բ.

(Շար. ԳԵՆ ԲԻՆ 3772)

Քաղաքականութիւնը ժամանակէ մի վեր կ'սկսէր հրապոյրներ ունենալ բանաստեղծին համար : Աղքատ լինելով, չէր կըրնար անդամակցիլ Երեսօրիսանաց ժողովոյն : Կը մնար Աւագաց ժողովն, ոյր մասնակցելու համար հարկ էր գտնուիլ այն դասակարգերէն միոյն մէջ յորս թագաւորն իւր ընտրութիւնները կ'ընէր : Այդ դասակարգերէն մին միայն մատչելի էր իրեն, Ֆրանսական Արագեմիան : 1836ին ներկայացաւ, այլ Պ. Տիւբաթի նախամեծար համարուեցաւ : 1839ին ներկայացաւ, եւ Պ. Մուլէ ընտրուեցաւ : 1840ին ներկայացաւ, եւ Պ. Ֆլուրէնս գերագատուեցաւ : Դուռը վերջապէս բացուեցաւ 1841ին : Իւր ընդունելութեան ճառը ցոյց կուտար իւր նպատակն. աւելի քաղաքական էր այն քան գըրական : Իւր իղձն իրագործուեցաւ վերջապէս 1843ին. Լուի Ֆիլիպի թագաւորն Աւագաց ժողովոյն անդամ անուանեց զայն :

Երկու տարի առաջ, Վիքթոր Հիկո ընտանեկան մեծ սուգ մ'ունեցած էր : Սպանիոյ մէջ կ'ուղեւորէր, երբ յանկարծ լուր ստացաւ թէ իւր անդրանիկ աղջիկը, Լէոբուրին, որ ամուսնացած էր Պ. Շարլ Վալլիէի հետ, իւր ամուսնոյն հետ խղճուած էր ի Վիլլիէ, Ստորին-Սէն : Սէն գետին վրայ պտոյտ մը կ'ընէին առաքաստաւոր մակոյկի մը մէջ, որ, հողմոյն բռնութենէն չըջեցաւ. եւ այսպէս նորապսակ ամուսնուկուր եղաւ : Ո՞վ չէ կարգացած այն ըսքանչելի բանաստեղծութիւններն զորս այս աղէտ ներշնչած է բանաստեղծին. Հայեցողութեան մէկ գլուխը կը ընուն : Անցողակի յիշէք թէ Հիկո որքա՛ն դժբաղդ եղած է իւր ընտանեկան կենաց մէջ. իւր ծերութեան մէջ տեսաւ իրեններն որք իւր չորս կողմը, մի առ մի, կ'իյնէին մահուան մահադաղին տակ : Իւր երկու եղբայրները մեռան իրմէ առաջ : Տիլին Վիքթոր Հիկո

մեռաւ 1868ին . իւր չորս զաւակներէն , Լէոփոլտին խղիւղեցաւ 1845ին . անդ բանիկը , Շարլ , մեռաւ 1871ին , թողով իւր հաւակ , Ժորժ եւ Ժան , որք այսօր միակ ժառանգորդն են Հիւկոյի մեծ անուան . երկրորդ որդին , Ֆրանսուա-Վիքթոր , Շէյ-քըսթրի թարգմանիչը , մեռաւ երկու տարի յետոյ , 1873ին , առանց ամուսնացած լինելու . կրտսեր աղջիկն , Ատէլ , որ անգլիացի սպայի մը հետ ամուսնացած էր , եւ որուն մտաւորական կարողութիւնները խանգարուած են , կը գտնուի այժմ ի Փարիզ , յիմարանոցի մը մէջ , ուր հայրն ամեն չաքաթ կ'երթար այցելութիւն տալ նմա :

Վիքթոր Հիւկո ժամանակ չունեցաւ մեծ դեր մը խաղալու Աւագաց Ժողովոյն մէջ : Քիչ յետոյ կը ծագէր փետրուարի (1848) յեղափոխութիւնն որ կը տապալէր Լուի-Ֆիլիպի իշխանութիւնը : Սահմանադիր Ժողովոյն մէջ , կ'սկսի հանրապետական կուսակցութեան յարիւ , փայլուն ատենաբանութիւններ արտասանելով : Այս առթիւ իւր հին բարեկամներէն ունի կ'ամբաստանէին զայն թէ հակասութեան եւ մատնութեան մէջ կը գտնուէր , քանի որ , ինչպէս ըսինք , Հիւկո արքայական էր իւր երիտասարդութեան ժամանակ :

Իւր բանաստեղծութիւնը լինելով տեսակ մ'օրագիր ուր կը գրէր իւր տպաւորութիւններն ու մտածումները , Հայեցողական մէջ սա պատասխանը կը գտնենք ընդդէմ այս յանդիմանութեանց .

Ուրացող կը կոչեն զիս , որ առաքեալ կարծեցի զսոճնս :

Եւ կը բացատրէ թէ ի'նչպէս , միշտ փոխուելով , միշտ կ'առաջնորդուի ճշմարտութեան սէրէն եւ կը մնայ :

Միշտ միեւնոյն ցօղունն ուրիշ ծագկով մը :

1848ին հիմնեց Էփէման լրագիրն , ոյր ճակատը կը գտնուէին սա խօսքերը . « Բուռն ատելութիւն անիշխանութեան , գորովալի եւ խորունկ սէր Ժողովրդեան » : Այդ լրագրով կը պաշտպանէր Լուի Նաբոլէոնի ընտրելութիւնն ի նախադահլութիւն հանրապետութեան : Լուի Նաբոլէոնի ուղղամտութեան վրայ այն ատեն վատահոլութիւն ունէր Հիւկո : Օրէնսդիր Ժողովոյ մէջ վերընտրեալ , Վիքթոր Հիւկո ըսէ արկեց հանրապետական եւ

ընկերվարական կուսակցութեան հետ , ոյր պետն եւ ատենաբանը եղաւ : Այդ Ժողովոյն մէջ է որ արտասանած է իւր գեղեցկագոյն ճառերն :

Երեք տարւոյ չափ , իւր հին պաշտօնակցաց , եւ մանաւանդ կաթոլիկ կուսակցութեան պետ Պ. տը Մոնթալանպէրի հետ խորհրդարանական բուռն պայքար մ'ունեցաւ : Իւր դարձն իրեն դէմ գրգռած էր կրքոտ թշնամութիւններ : Ամեն նիստերու մէջ , իրեն կը յիշեցնէին իւր արքայական եւ նաբոլէոնեան գեղօններն : Օր մը երբ Հրուսի գործոց վրայ կը խօսէր , Պ. տը Մոնթալանպէր կարգաց նորա երիտասարդութեան գործերէն մին : Վիքթոր Հիւկո կարկեց նորա բերանը սա պերճախօս պատասխանով .

— Կը պաշտպանեմ զիսալիս , որպէս Պ. տը Մոնթալանպէր պաշտպանած է զԼեհաստան : Այն ատեն իւր հետ էի , այսօր ինձ դէմ է : Ասոր պատճառն ամենապարզ է . սա թէ ինք անցած է անոնց կողմ որք կը ճշուն , եւ թէ ես կը մնամ անոնց կողմ որք կը ճշունին :

Երբ տեսաւ Լուի-Նաբոլէոնի դիտումները կայսրութեան վերահաստատման մասին , կատաղի պատերազմ մը բացաւ . արդէն կը կոչէր զայն Փոքրիկ Նաբոլէոն եւ Օգոստոսիկ : 1851 նոյեմբերի սոսկալի նիստերէն միոյն մէջ , հինգ ժամ անդադար կայսրութեան վերահաստատման դէմ խօսելէ յետոյ , քիչ մնաց որ նուազէր բեմին վրայ : Այս առթիւ արտասանած ճառերն ընտրելագոյններն են :

Դեկտեմբեր 2ի Պետական հարուածին վրայ , յորում նոր հանրապետութեան նախագահ Լուի-Նաբոլէոն տասնամեայ նախագահ կը հռչակէր ինքզինք եւ խորհրդարանը լուծելով , իւր կատաղի հակառակորդները կ'աքսորէր , Հիւկո , քանի մը հանրապետական երեսփոխանաց հետ փորձեց դիմադրութիւն մը կազմակերպել : Այս օրերը պատմած է նախ Փարիզի Նաբոլէոնի մէջ , զոր հրատարակեց արսորուէին անմիջապէս յետոյ , եւ Ոճրէ մը պարտաւճիւն մէջ , երկու հատոր , զորս յօրինած է 1852ին , այլ որք հրատարակուեցան միայն 1877ին :

Աքսորելոց ցանկին մէջ իւր անունն առաջիններէն էր : Իւր գլուխը բերդին վարձք խոստացուէր էր : Երբ դիմադրու-

ները պիտի ցոյց տան, թէ յոյսիս սյդ ազօտ ճառագայթները դեռ եւս հեռի էին խաբուսիկ չլինելուց:

25ին «Եպիսկոպոս» . « Գործերը վատ ընթացք են բռնում (զարմա՛նք, կ'ասէ ընթերցողը) . մի քանի աշակերտներ, թոյլերից, դասերնին չէին պատրաստել: Թ. ը իրեն յատուկ գոռոզութեամբ յայտնեց թէ անհասկանալի են իրեն նոր կանոնները: Այդպէս է վարւում նա ինձ հետ վերջին երկու շաբաթները, յորմէ հետէ ես յանձն չաւի բացատրել նրա համար մի պարզ կանոն կրկին անգամ: Գ. ը թղթում էր ինձ խաբել, հաւատացնելով թէ խնդիրները կորած են զգրոցի մէջ . իրեն տրւած 1/4 ժամը բաւական չէղաւ զայն գտնելու համար: Յաւալի է որ մեր քաղաքի աշակերտները գիշերները պարապելու սովորութիւն չունին: Ե. ը դարձեալ ձեռքերը չէր մաքրել. կրթարանի վարչութիւնը անտարբեր է դէպ ի մաքրասիրութիւն: Սոյն օրինակ զանցառութիւններով շատ հարուստ էր այսօրուայ դասը: Առ հասարակ մի բան անհրեքելի է . որքան էլ շատ լինի աշակերտների համակրութիւնը իմ դասերի եւ մանաւանդ անձնաւորութեան համար, դժուար է թուում նրանց ձեռք քաշել իրենց հին սովորութիւններից ու բնաւորութիւնից: Այդ երեւոյթը նկատելի է Վանի բոլոր դըպրոցներում: Տաժանելի է ուղղել մարդիկ, որ խանդարուած են տարիների ընթացքում: Իմ խիստ պահանջները ցնցում են նրանց նեարդերը: Այդ ցաւը նրանք չեն կարողանում տանել, թէեւ կը ցանկաւորին ինձ չը վշտացնել »:

Դեռ այդ սկիզբն էր երկանց:

27ին «Եպիսկոպոս» . « Այսօրուայ դասը անցեալից վատ էր: Ա. ը եւ Թ. ը շարունակում են իրենց վրէժը լուծել: Առաջինի դէմքին նկատելի է կեղծ յարգանքի դիմակ. կարծես սպասում է յարմար առթի կտտաբեւապէս ինձ հետ աւրելու համար: Դժուար է ուղղել մանաւանդ ըմբոստագոյն Թ. ին քանի որ նա ուրիշ կրթիչների մօտ արտօնութիւն ունի իր բնաւորութիւնը ցոյց տալու: Զ. ը շատ լաւ էր: Է. ը փորձեր է անում չակնածել ինձանից: Իմ կտրուկ յայտնութիւնը, թէ այդ փոփոխութեան համար (նա շատ ճարպիկութեամբ ծածկում էր ա-

ռաջ իր զգուելի յատկութիւնները) իսպառ կը հեռացնեմ՝ զինքը իմ դասերից՝ արդիւնաւոր եղաւ: Գ. ը աւելի լաւ էր: Բ. ը, Դ. ը եւ Ժ. ը այդ դասարանի աղամանդներն են ըստ ամենայնի, իրենց բնաւորութեան նուազ խանդարուած լինելու եւ խոհեմութեան շնորհով: Շատ դժգոհ արտայայտութիւններ ունէին բոլոր թոյլ եւ ծոյլ աշակերտները, նամանաւանդ Ի. ը, որ ոտից մինչեւ գլուխ անպէտք է »:

Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր,

Ընդ եղեգան փող՝ ըոց ելանէր . . .

Հեպտէալ առաւօր . « Լսեցի որ *** դասարանի աշակերտներից մի քանիսը առաջնորդութեամբ Ա. ի խլրտում են պատրաստում իմ դէմ . . . խլրտում . . . բայց դա միթէ առաջին անգամն է կեանքիս մէջ . միթէ այդ արարմունքները պիտի չկազմեն կրթական կեանքիս թաղն ու սրակը: Նըրանք, այդ փոքրիկ դաւադիրներս, յենում են իմ դասատւութեան իրր թէ իրենց անհասկանալի եւ անգործնական լինելու վրայ: Գուշակութիւններս իրագործւեցան . իմ խիստ պահանջները (այդ ձեւով կրթուած աշակերտների համար) ցաւ են պատճառում նրանց նեարդերին: Պէտք էր ընտրել երկուսից մէկը եւ նրանք ընտրեցին հեշտագոյն ճանապարհը: Դեռ եւս յոյս ունիմ թոյլերին ու անպիտաններին նրանց միջից բառնալով՝ վերականգնել հին բարեկամութիւնը »:

Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր . . .

Բայց ես չթողի, ես բոլոր ուժով խափանեցի այդ շարաքաստիկ « պատանեկի » ըյս աշխարհ դալը: Բայց ես այդ արի ոչ փախսկայով, « ալանջ ծամել տալով », « վզէն ջրի ստփոր » կախելով ու գլխին « Հայր մեր » ասելով, այլ իմ տոկունութեամբ, մտատունջութեամբ ու ամբողջ հոգուս զօրութեամբ: Գիշերային պարապմունքներին մի ժամը յատկացեալ է այդ հոգեբանական հետազօտութիւններին. հաւանական յոյսին հեռանկարը եւ Յիշատակարանիս դիւթական ազդեցութիւնը միակ աղաւէնն էին ինձ համար: Բոպէ առ բոպէ ալանջիս շփուում էր մի չլուկ . թափանցեցի յայն ձայն — եւ ահա՛ անմահն Ստեփաննոս Կաղարեանց .

Մի՛ վախեցիր, քաջ նաւարկու, յառաջ խաղա՛, փանի որ քո առաջնորդն է ճշմարտութիւն, Նովածայուից, մերկիներեց երկեւղ չը կայ:

Այդ ձայնը տարօրինակ չէր, զի հանգամանքը ոչ միայն կրթական, այլեւ իմհասարակական կեանքիս մէջ եղականը չէր: Եւ ո՞րչափ ուրախ եմ այդ պատահարների համար: Այդ գիտէր Անմահը եւ ինձ հետ կը կրկնէր.

Թո՛ղ կատարին դազան դարձած տարերք բոլոր, Թո՛ղ մի բոպէ ծածկեն աչքիցդ լոյս հորիզոն.

Ովկիանում քեզ այդ բանը չէ անսովոր:

Պարզեցի նաւիս առաջատները եւ խաղացի յառաջ, անվախ, աներկիւղ: Մովածայուերը հաղիւ հաղ նրա գնացքը միայն ուշացնում էին, թէեւ դադան դարձած տարերքը յաճախ լոյս հորիզոնն էլ աչքիցս ծածկում: Բայց ես շարունակէի գէպի նաւահանդիստ. յամառեցի եւ շարունակեցի: Թէ ինչ էի մտածում իւրաքանչիւր կայարանում, յետ նայելով յաճախակի գէպի անցած վիհերը, ձանձրալի է այս տեղ մի առ մի թւել. շատանանք միայն մէկով: Յամառեցի հաղիւ եօթ շաբաթ հեռացած, բաց ովկիանոսի մէջ, մի դեղածիծաղ արեւի տակ գրիչն առի ձեռքս ու գրեցի.

17ին Նոյեմբերի. «Թ. ի ըմբոստութեան Նոյեմբեր դեռ եւս երեւում են: Երկու Խ. երը եւ Լ. ը չեն կարողանում առաջ շարժել. ո՞րքան խոչնդոտ են այդ թոյլերը: Սակայն լաւերը միշտ աշխատում, պարկեշտները ազնւանում են: Անկարելի է երեւակայել հին յարաբերութեան վերադարձը ոչ միայն լաւերի, այլ նոյն իսկ վատերի, ըմբոստների կողմից: Բոլորն էլ քաբէկ են ինձ: Այժմ մենք գտնւում ենք այն դրութեան մէջ, ուր միմեանց հետ գժտւելը մեծ անխղճութիւն պիտի լինի երկուստեք: Մէկ խօսքով՝ ես քեզ եմ դասարանի, իսկ տէր լինելը կրթիչի ամենամեծ նեցուկն է: Ա՛խ, այդ թոյլերը, թոյլերը... »:

Բայց ովկիանոսի անյայտութեան մէջ լողացողի համար այդ ա՛յայծառ արեւները դեռ եւս կեանքի կատարեալ ապահովութիւն չեն. նրանք՝ միայն նրա ժամանակաւոր ամօքիչ նեցուկներն են: Ուստի ինձ աֆ էր հարկաւոր, այն ցանկալի նաւահանդիստը, ուր խռովեալ նաւը վերջապէս իր դադարը պիտի առնէ:

Ինչ մարդ անյոյս է՝ նա կեանք չունի: Աշխատա՛ք, յոյս, համբերութիւն—եւ առնայն ինչ կատարուած է: Այս՝ իմ ալեկոծ կեանքի ամենօրեայ խրատն է եղել:

«Ա՛ֆ», իրական ա՛փ, շարունակում էի ես անվրդով. եւ ահա՛ մի օր, մի օրհնեալ, մի գեղեցիկ օր, ես, ո՛ր զարմանք, ձգեցի վերջապէս նաւիս խարխալը տիեզերքի ամենաապահով եւ յաւիտենական նաւահանդիստը: Ապահով՝ զի չէ նա ենթակայ հողմի հարուածներին, յաւիտենական՝ զի հեռի է նա մարմնաւոր ոչնչութիւնից: Այդ՝ պատանիների այն զօրաւոր «էրֆ» է, որ ծանօթ ու պաշտելի է մի միայն զօրաւոր սիրտ ունեցող կրթիչներին:

Ահա թէ ինչ էի գտնւում այդ «Նոր Ամբիկայի» գիւթիչ օդը քաղցր մեղամաղձութեամբ կլանելուց յետոյ.

Յէ՛ն Դէկթեմբերի. «Այս կէս գիշերին, երբ գրում եմ այս ցանկալի տողերը, դեռ եւս գտնւում եմ այն քաղցր տաւառութեան տակ, որ թողեց ինձ վրայ առաւօտեան*** դասարանը:

«Ամբողջ դասը անցուցի մտածումներով. ո՞րքան փոփոխութիւն երկու ամսուայ մէջ: Ձեմ՝ ուղում՝ այլեւս աչքերիս հաւատալ թէ այդ տղաները մի օր իմ դէմ խրատում էին պատրաստում: Ձեմ՝ կարող չ'ապշել այդ խորին յարգանքն ու համակրութիւնը նախկին ատելութեան հետ համեմատելով: Ա՛խ, ո՞րքան գեղեցիկ են տղաները սիրոյ ու յարգանքի մէջ: Ո՞րչափ աստուածային է սիրոյ կնքած դրոշմը մարդու կերպարանքի վրայ, լինի նա անմեղ մանուկի հրեշտակային թէ չքնաղ կուսի տրտային զգացումը: Եւ ո՞րչափ դրաւիչ է աշակերտի լուրջ ձակատը՝ աշխատանքին նուիրւած ժամանակ:

«Այդ արագ կերպարանափոխութիւնը մի կատարեալ հրաշք է, իմ հոգեկան ոյժի անընդհատ զարգացման ջերմաչափ: Այդ օրինակ հրաշքներով միայն կարելի եղաւ ինձ անյողղ ողբ պահել զիս հնգամեայ դործունէութեանս մէջ: Այդ հրաշքներով միայն ես ուխտ եմ դնում պսօք եւ յաւիտեան չհեռանալ բաց աչքերով իմ պաշտելի նոր սերնդի ընկերութիւնից: Այն հաստատ համոզումը, թէ ես արժանի եմ իմ վսեմ կոչման՝ մի վայրկեանի մէջ խորտակում է այն բարոյական ու նիւթական արդեւքները, որոնք երբէք, մի

— Կեցցէ՛ Ֆրանսա , գոչեց ծերունին . կեցցէ՛ բանակը . կեցցէ՛ Ֆրանսական բանակը . կեցցէ՛ հայրենիքը :

«Զինուորներն , յողնութենէ ջախջախուած , տարտամ ու մարտծ աչքով կը նայէին , առանց հասկնալու :

«Նա կը շարունակէր քաջալերական խօսքեր եւ «կեցցէ՛» ներ ուղղել , որք փողերու ձայնին կը նմանէին . «Ո՛չ , ո՛չ , յանցանքը ձերը չէ , դուք ձեր պարտքը կատարեցիք» :

«Ու երբ կառախումբը վերստին մեկնեցաւ , արցունքները յամրաբար իջան իւր այտերուն վրայ եւ դնացին կորսուիլ իւր սպիտակ մօրուքին մէջ» :

... «Ժամ տասնին , կառախումբը կանդ կ'առնու հիւսիսային կայարանը : Պ. Պ. Մէօրիս , Վալլերի եւ Ֆրանսուա-Վիքթոր Հիւկօ , որք այն ատեն ի Փարիզ էին , դէպ ի դռնակը խոյացան , գրկեցին զնա եւ առին տարին :

— Սը՛ս , ըսաւ Վիքթոր Հիւկօ ցուցնելով անոնց կառախմբեր որք կայարանին մէջ կ'սպասէին : Վիքտուրներ կան անդ :

«Դուքսը , Ժողովուրդը կ'սպասէր եռանդագին :

«Այն ատեն է որ ըսաւ ամբոխին .

— Կ'ուզամ աստ իմ պարտքս կատարել :

«Մինչեւ Ֆրոնչօ ծառուղին տարուելէ յետոյ , վերստին չնորհակալ եղաւ բազմութեան ըսելով .

— Մէկ ժամուան մէջ կը փոխարինէք տասն եւ ինը տարուան աքսոր» :

Իւր ժամանումէն քանի մը օր յետոյ , Գերմանացուց ուղղեց երկար յայտարարութիւն մը՝ հրաւիրելով զանոնք հրատարակել Գերմանական Հանրապետութիւնն եւ ձեռք կտուկառել Ֆրանսայի :

Առաջին անգամ որ Ակադեմիոյ ներկայացաւ , բարապանը թողչէր տար որ ներս մտնէ : Տխրութեամբ ժպտեցաւ :

— Կը հասկնամ ըսաւ , քսան տարի կայ որ եկած չեմ :

Պաշարման միջոցին Փարիզ մնաց : Պապուհաճերու նոր տպագրութիւն մը 100,000 օրինակ ծախուեցաւ մի միայն պաշարեալ քաղաքին մէջ : 1871ի փետրուարին Սէնի ներկայացուցիչ կարգեցաւ : Այդ ատեններն է որ մեռաւ իւր Շարլ որդին եւ թաղուեցաւ ի Փարիզ մարտ 18ին , այն օրն յորում

կը ծագէր Հասարակուրդի ապստամբութիւնը : 1876ին Փարիզի կողմէ Դերակուտի անդամ ընտրուեցաւ եւ 1882ին վերընտրեցաւ :

Ֆրանսա վերադառնալէն յետոյ , 1873ին հրատարակեց Ահեղ դարէն , 1873ին՝ Հայրենեաց Ազատութիւնն , բանաստեղծութիւն որ ծախուեցաւ յօգուտ Ալլիաս-Լուէնցուց . 1874ին , գորովալի երկմը , Զաւիւրս . Ինսան երէտ , վէպ որ Թշաւառայ նման տասն լեզուօք հրատարակուեցաւ մի եւ նոյն օր : 1875ին եւ 1876ին , Գարշտ եւ Խօտ , երեք հատոր , հաւաքածոյ իւր ատենախօսութեանց . 1876ին , Դարուց վեպերուն երկրորդ մասը . 1877ին՝ Մեծ հայր լինելու արեւտար եւ Ոճիւն հրատարակութիւն . 1878ին՝ Պապը . 1879ին՝ Գերագոյն Գիտելիք . 1880ին՝ Կրօններ եւ Կրօն . 1881ին՝ Էշ , Թարգմանաբան . 1882ին՝ Բառեւ հոգմանս հոգ . 1885ին՝ Մանչիկները :

Մեր յիշատակած գործոց վրայ պէտք է յաւելուլ նաեւ Բարդախի հոգմանքի վաղեմի շաճախաց հետաքրքրական յառաջաբանով մը , հրատարակեալ 1824ին . Էջերալստ , օրէրա չորս արարուածով իւր Նիւր-դամ որ Բարի վէպէն քաղեալ , ներկայացեալ 1836ին . Մանկանս , հաւաքածոյ իւր այն բանաստեղծութեան որք մանկանց կը վերաբերէին , հրատարակեալ 1830ին : Յիշենք վերջապէս թէ Վիքթոր Հիւկօ լաւ գծագրիչ մէր . իւր նկարաց մէկ հաւաքածոյն հրատարակուեցաւ 1865ին . բաց աստի բազմաթիւ նկարներ ունի պատկերազարդ հրատարակութեանց մէջ :

Մեծ բանաստեղծին գործերը բազմաթիւ տպագրութիւններ ունեցած են : Վերջինն , անփոփոխելի տպագրութիւն կոչուած , բանաստեղծին ձեռագիրներու վրայէն եղած է , եւ կը պարունակէ զոր ինչ Հիւկօ հրատարակած է ցարդ : Այդ տպագրութիւն դեռ քանի մը ամիս առաջ աւարտեցաւ :

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՀԻՄՆԱԴՐՈՒԹՒՆ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻՈՅ

Պ. Ս. Դ. Ա. Ֆրանսիացիներն մեզ կը դրկէ թարգմանութիւն մը ֆրանսական «Միւսէոն» հանդէսին, ի մասին հիմնադրութեան ֆրանսական Ա. կադեմիոյ: Գովելի է տեսնել թէ գաւառաց մէջ ալ կայ երիտասարդութիւն մ'որ կ'սկսի զբաղել գրական եւ գիտական խնդիրներով:

«Դէպի 1629 թուականը, կը զրէր Բէլիսոն 1652ին, Բարիլոս զանազան կողմերը բնակող մի քանի մասնաւոր անձինք անյարմար դատելով այդ մեծ քաղքին մէջ երթալ աստ անդ զիրար փնտռել եւ շատ անգամ չը գտնել, որոշեցին շաբթուան մէջ օր մը զիրար տեսնել: Ամէնքն ալ գրական անձինք էին, հասարակ ժողովուրդէն յոյժ բարձր արժանեօք . . . Պ. Կոնրարտի տունն հաւաքուեցան որոյ բնակութիւնը զիրենք ընդունելու յարմարագոյնն (Ս. Մարթէն փողոց) եւ քաջքի կեդրոնն էր, ուստից միւսները գրեթէ հաւասարապէս հեռու կը գտնուէին:

«Հոն ընտանեբար կը խօսակցէին, ինչպէս սովորական այցելութեան մ'առթիւ, ամէն տեսակ նիւթոյ՝ ինչպէս առեւտրոյ, ընթացիկ լրոց, գեղարուեստից վրայ: Օրինակ իմն, եթէ մին ի նոցանէ երկասիրութիւն մը պատրաստեր էր, ինչ որ յաճախ կը պատահէր, յօժարութեամբ այլոց կը ցուցնէր որք ազատաբար իրենց կարծիքը կը յայտնէին, եւ իրենց խորհրդակցութեան կը յաջորդէր մերթ չըջադայութիւն մը, մերթ թեթեւ ձաջ մը զոր միասին կ'ընէին: Այսպէս երեք չորս տարի շարունակեցին, մեծ հաճոյիւք եւ անհաւատալի օգտաշատութեամբ, ինչպէս անոնցմէ շատերէն լըսած եմ: Այնպէս որ երբ այսօր դարձեալ խօսք բացուի այդ ժամանակին՝ Ակադեմիոյ այդ նախապարուն վրայ՝ կարծես ոսկեղաբու մը վրայ կը խօսին որոյ տեւողութեան ատեն, նախկին դարուց կատարեալ անմեղութեամբն ու ազատութեամբն, անշուք ու անչուկ, եւ միայն բարեկամական օրինօք, միասին կը ձաշակէին հանճարեղ անձանց ըն-

կերակցութեան եւ բանաւոր կենաց բոլոր քաղցրութիւնն ու հրապոյրն:

«Այսպէս եղաւ համեստ ու աննշան ծագումն այդ ընկերութեան որ անյապաղ պիտի դրաւէր մտաւորական աշխարհին եւ առ հասարակ հանրային կարծեաց մէջ ամենափայլուն աստիճանն:»

Ի՞նչպէս կը վերջանայ այդ «ոսկեղարն» զորմէ կը խօսի աստ պատմադիրը: Պիտի տեսնենք:

Անոնք որ այսպէս կը հաւաքուէին, տաղտկաբեր դէմքերէ վախճալով՝ որոշած էին բնաւ չը խօսիլ ումեք իրենց դուստրմանց վրայ, եւ այսպէս տեւեց երեք չորս տարուոյ չափ: Բայց Պ. Ֆաուէ անուն մէկը զիրք մը տպադրել տուած ըլլալով՝ զայն ընծայեց Պ. տը Մալվիլին, մին յանդամոց ժողովոյն, որ հրաւիրեց զինքը ներկայ դրանելի նստի մը ուր զիրքը կարգացուեցաւ, ըննադատուեցաւ եւ հեղինակը մեկնեցաւ ժողովէն «ի դոհունակութեամբ, թէ՛ իւր դործոյն նկատմամբ ստացած կարծիքներէն եւ թէ՛ խօսակցութեան միւս պարագայներէն»:

Պ. Ֆաուէ եղելութիւնը պատմեց իր երկու բարեկամաց, որոց մին, Պ. Տէմոտէսթ, այն ատենները քերթուած մը կը յօրինէր, եւ միւսն, Նոյնպէս քերթող և յոյժ մտերիմ Ռիչլիէօ կարդինալին, այդ տիտղոսին շնորհիւ ընդունելութեան արժանացաւ:

Արդ՝ երկուքն ալ եկին, եւ ինչպէս Պ. Ֆաուէ, սքանչացած մեկնեցան, զի հոն չը գտան բնաւ ծեծեքանաց ու փաղաքշանաց սովորական տուրեւաւն, յորում անձնաւոր որ գովեստ կը շուայէ գովեստ ընդունելու համար. այլ ընդհակառակն տեսան թէ հոն ամենամիտք սխալներն անգամ համարձակ ու անկեղծ կերպով կը քննադատէին, որուն համար ուրախութեամբ եւ զարմանօք համակուեցան:

Երկրորդն ի նոցանէ այն Պատուօպէն էր որ Կարդինալին մօտ ընդ գտնելն զուարճալի պատմութիւններ ընելու արուեստին մէջ ունեցած յաջողակութեան կը պարտէր մասնաւորապէս (*):

(*) Կարդինալին բժիշկը, Սիդոս, կ'ըսէր միշտ. «Բարապատուելի հայր, իմ դեղորայքս բնաւ ազդեցութիւն չպիտի ընեն, եթէ անոնց մէջ քիչ մը Պատուօպէն չխառնուի»:

Թիւնն ամբողջատէս ջախջախուեցաւ, Վիքթոր Հիւկո ջանաց փախչիլ: Բազմաթիւ ունայն փորձերէ յետոյ, վերջապէս ապաստանեցաւ մարքիդի մը տունն ուր մնաց հինգ օր, եւ անտի անցագիր մը ձեռք ձգելով, դէկտեմբեր 14 ին դադարադուրի հասաւ ի Պրուսէլ: Իւր երկու զաւակներն, որք, պետական հարուածի միջոցին բանտարկուած էին Էֆֆֆանի խմբագրաց մէջ, յետոյ գնացին իրեն միանալ յիւր արտարմայրն:

Փոքրէն Նաթանի յառաջ բերած արդիւնքն սոսկում ազդեց պեղծիական կառավարութեան, որ, Նաթոլէոն Գ. ի դժգոհութեան առիթ չտալու համար, արտաքսեց զայն իւր սահմաններէն: Վիքթոր Հիւկո ապաստանեցաւ ի Ջէրսէյ կղզին, ուսկից հանդիսաւորապէս ծանոյց իւր հաստատ մտադրութիւնն թէ երբէք Ֆրանսա չպիտի վերադառնար, մինչեւ որ կայսրութիւնը չյնար:

Կ'ընդունիմ դառն արտորդ, թէ չունենայ նա վախճան,

Առանց ի խնդիր եղնելու եւ առանց նկատելու թէ մէկը կ'ըսէ, որ կարծուած էր աւելի կուռ, եւ թէ քանիներ կ'երթան որք պարտէին մնալ:

Եթէ միայն հազար են, է՛հ, անոնցմէ եմ: Նոյն իսկ եթէ հարիւր են, կ'արհամարհեմ դէռ զՍիլլա: Եթէ տասն հոգի մնան, տասներորդը կը լինիմ: Ու, եթէ միայն մին մնայ, այն մին ալ ես կը լինիմ:

Այդ կղզւոյն մէջ է որ աւարտեցան Պապահանքերը, եւ անտի է որ այդ վրիժառու, երկն ծայրէ ի ծայր հայրենաշունչ ազադակ մը ընդ դէմ Նաթոլէոն Գ. ի խարդաւանաց, հրատարակութեան յանձնուեցաւ: Գրքին վաճառումն ահագին եղաւ. աշխարհ համայն կարդաց այդ գիրքն, եւ կայսրութեան միջոցին, Ֆրանսական սահմանազըլսոց վրայ գործօն մարտանենդութեան մ'առարկայ եղաւ: Թէեւ արգիլուած, այլ Ֆրանսացի չը մնաց որ չը կարդար զայն ու եւ է կերպիլ: Բանաստեղծը սակայն ոչ մէկ սու շահեցաւ այդ գործին, որ հարստացուցած էր բազմաթիւ տաղաքիչներ:

Ձը դանգատեցաւ, երջանիկ տեսնելով տարածուիլն այդ մարդարէական տալերուն որք կայսրութեան կը ծանուցանէին իւր գոյութեան դիւրաբեկութիւնը: Սակայն, աղքատ էր այդ ժամանակ. պետական հարուածը սնանկացուցած էր զայն. իւր խա-

ղերը չէին ներկայացուեր, իւր դրբերը չէին ծախուեր ի Ֆրանսա. եւ բազմանդամ ընտանիքի մը համար 7500 Ֆրանքի եկամուտ մը միայն կը մնար իրեն:

Սակայն Ջէրսէյ կղզւոյն մէջ ծագած խռովութեանց պատճառաւ, 1856ին արտորուեցաւ անտի եւ գնաց հաստատուիլ ի Կէրնըսէ, ուր դուրս ելաւ միայն Ֆրանսա վերադառնալու համար: Այդ արտարանաց տարիներն Հիւկոյի ամենէն բեղմնաւոր տարիներն եղան: 1856ին հրատարակեց «Նյե-ցոդ-Բեան» երկու հատորներն. 1859ին, Վէպ Դաբոն, որ տիեզերական հիացում մը յարոյց եւ որ իւր ընթերցողաց մեծամասնութեան համար մնացած է իւր բանաստեղծական հրաշակերտից սքանչելագոյնը: Բանաստեղծին ոտանաւորներն երբէք ունեցած չէին նոյն փայլը: 1862ին լոյս տեսաւ իւր մեծագոյն գործը, որ ի վաղուց հետէ կ'ապաստէր անհամբերութեամբ, Թլառանքն, վէպ հսկայական, յորում հեղինակը իմաստասիրօրէն կը յուզէ ընկերային խնդիրներ յանկուցիչ վէպի մը ձեւին տակ: Այս գործ միեւնոյն օր ի վաճառ հանուեցաւ ի Ֆարիդ, Պրուսէլ ի Լոնտրա, ի Նիւ-Եորք, ի Մատրիտ, ի Պէրլին, ի Բեդրսպուրկ եւ ի Թուրին, ինն լեզուներով: Ժողովրդական պատկերազարդ հրատարակութիւն մը ծախուեցաւ 150,000 օրինակ: Շաղ Հիւկո իւր հօր վէպէն տոամ մը շինեց որ 1863ին ներկայացուաւ ի Պրուսէլ:

Ուէլսմ Եէյսթէրի վրայ ուսումնասիրութիւն մը հրատարակուեցաւ 1864ին. Փոքրացեալ Եւ Անպառաջ երգերն, 1865ին. Մոլա-աշխարհներն, երեք հատոր, 1866ին. Խնդա-յող Դաբոն 1869ին: Իւր գործերու հետ մէկտեղ, իւր թատրերգութեանց ներկայացմունք Հիւկոյի անուան կուտային անսահման ժողովրդականութիւն մը:

1869ին, հիմնուեցաւ ի Փարիզ Բաբէլ լրագիրն, որ կերպիւ իւրիք յաջորդութիւնն էր Էֆֆանի: 1870ի ժողովրդային քուէարկութեան պահուն, այդ լրագրին մէջ հրատարակեց բոլոր մը ոյր վերնադիրն էր. «Ոչ, երբք առուով այս բառն ամեն ինչ կ'ըսէ»: Այս յօդուածին պատճառաւ ի բացակայութեան դատուեցաւ եւ կառավարութեան դէմ ատելութիւն եւ արհամարանք տարածել ջանալու ամբաստանութեամբ դատա-

պարտուեցաւ : Մինչդեռ այսպէս միշտ կ'ենթարկուէր կայսրութեան խտրութեանց , եւրոպա կը ծափահարէր զայն իբր մին այն հանձարներէ որք ամեն ժողովրդոց կը վերաբերին : «Պէտք է ապրած լինել կայսրութեան այդ տարիներուն մէջ,—կը գրէր ապա Էմիլ Զոլա որ Հիւկոյի կատաղի հակառակորդներէն մին եղած է գրական կենաց մէջ,—հասկնալու համար թէ բանաստեղծն ի՞նչ մեծութիւն կ'զգենուր ի հեռուստ : Մեզ ամենուս, քսանամեայ երիտասարդներ, կ'երեւէր իբր շղթայակալ հսկայ մը, որ տակաւին կ'երգէր փոթորկաց մէջ տեղ. Պրոմէթէոսն էր, գերմարդկային էր, կը տիրապետէր Ֆրանսայի վրայ զոր հեռուէն կը դիտէր արծուի աչքերով : Երբեմն, հովը կը թուէր մեզ բերել իւր շջերէն մի քանին, եւ կը լսիէինք զայնս, եւ կը խորհէինք՝ զայնս կարդալով՝ աջակցիլ խուլ յաղթանակի մը ընդդէմ բռնաւորութեան : Այդ բանաստեղծն, որ այնքան ուժգնութեամբ կը նախատէր կայսրութիւնը, վերջապէս ինքզինքն յարգելի ընծայած էր նոյն իսկ կայսրութեան : Երբ Գաբրիէլ Վիպերն ու Թշնամուհին հրատարակուեցան, ամեն ոք սքանչացման երկար աղաղակ մը արձակեց, եւ կարելի եղաւ այդ գործոց մասին գովեստներ գտնել մինչեւ իսկ միապետութեան ամենէն անձնուէր լրագրաց մէջ : Ուստաւ գնացութեան կ'երթային ի Կէրնըսէ : . . . Ուշադիր եւրոպիոյ դէմ, ժողովրդոց առջեւ որք կը հետաքրքրուէին եւ միապետաց առջեւ որք կը դողային, այդ պարզ բանաստեղծը մենամարտի բռնուած էր կայսեր մը հետ : Նաբոլէոն Գ-էն վնասուած, աքսորանաց ճանքաներուն մէջ ժողովուած ամբողջ ցեխն այդ վեհապետին երեսին նետած, Վիքթոր Հիւկո, հանդարտ ու զօրաւոր, կ'սպասէր իւր թշնամուհին հիմնայատակ կործանման . եւ իւր սպասման հանդարտութիւնը, իւր յաղթութեան ստուգութիւնը, արդէն իսկ կարծես կը դղրդեցնէին գահը : Յաճախ կայսրը իւր մտաց առջեւ բերած լինելու է այդ մարդն, ժայռին վրայ նըստած, հսկելով այն սխալ քայլին վրայ որ փոշոյ մէջ պիտի թաւալէր գինքն : Երկուքը ո՞վ պիտի յաղթէր, երկուքէն ո՞վ պիտի մեռնէր օտար հողին վրայ : Եւ աւաստիկ բանաստեղծն յաղթեց : Կայսրը վաւեր-

ուեցաւ իւր կարգին եւ դնաց ոգեւորիլ յԱնգլիա, մինչդեռ բանաստեղծը կը վերադառնար ի Ֆրանսա, ժողովրդեան ծափահարութիւններով : Այդ ահեղ մենամարտին մէջ, բանաստեղծը միայն կանգուն կը մնայ այսօր : »

Արդարեւ, սեպտեմբեր 4ի (1870) յեղափոխութիւնը բացաւ Հիւկոյի առջեւ Ֆրանսայի դռները : Իւր վերադարձն յաղթանակ մ'եղաւ : Կ'երեւէր իբր մարմնաւորումն զիմադրութեան ընդ այն մարդուն, որ Ֆրանքո-գերմանական պատերազմին պատճառն եղած էր, իբր մարգարէ որ ծանուցած էր այն աղէտներն որոց ներքեւ կործանած էր կայսրութիւնը : Ժիւլ-Քլարսի, որ Մեծ Բանաստեղծին ջերմ բարեկամներէն մին եղած է, Թանի մէջ վերջերս նկարագրած է այդ վերադարձն ի Ֆրանսա . . . «1870 սեպտեմբեր 5ին, երկուշաբթի օր, կայսրութեան անկման հետեւեալ օրն, Վիքթոր Հիւկո, որ այն ատեն Պրուսէլ կը գտնուէր, կայարանին դռնակը կը ներկայանար եւ սրտայուզութեան զսոթընուն ձայնով մը կ'ըսէր . «Փարիզի տոմսակ մը» . . . Երբ իւր ժամացոյցը նայեցաւ, ըսաւ ինձ, սոսկալի կերպիւ տո՛գունած .

— Աւաստի տասն եւ ինը տարի է որ կ'ըստասեմ այդ վայրկեանին :

. . . « Երբէք չպիտի մոռնամ այն խոր ու վեհ տպաւորութիւնը զորս ունեցաւ Մեծ Բանաստեղծն, այն ատեն վաթսուս եւ ութ տարեկան, աքսորանաց մէջ մազերն արդէն ձերմկած, տեսնելով Ֆրանսական առաջին զինուորը վահանին խորէն :

« Վինուայի զօրարածնէն խմբեր, խեղճ մարդիկ վաստակարէի, փոշեթաթաւ, դալկահար, վհատ, կը փախչէին ու հրաններուն առջեւէն որք մօտ էին : Իրենց աչերուն մէջ կը կարդացուէր վհատութիւն, եւ իրենց ֆիզիքական վիճակին մէջ՝ բարոյական տկարութիւն : Բայց Ֆրանսայի զինուորներ էին, անոր սիրացեալ համալցեալ ունէին, կապոյտ դրանցը, կարմիր տափառը, իրենց քայքայման մէջ, անվթար կը տանէին եւագոյն դրօշը :

« Խոշոր արցունքներ լեցուցին յանկարծ Վիքթոր Հիւկոյի աչերն եւ, կանգնելով, ապա ծռելով սպտուհանէն, յստակ, թըռթըռուն, յիմարական ձայնով մը՝

ԳԱԻԱՌԱՅ ՎԻՃԱԿԸ

Ե Ո Ձ Ղ Ա Տ

Ի ստորեւ կը հրատարակենք Եոզղատի ազգային գործոց վիճակին վրայ թղթակցութիւն մը, որ, մեծ խնամով պատրաստեալ, ի հանդէս կը բերէ հետաքրքրական տեղեկութիւններ: Համակին այլ և այլ մասանց վրայ կեդր. վարչութեան ուշադրութիւնը կը հրաւիրենք:

Ա.

14 մայիս

84 տարին Եոզղատու համար բարեբաղդ չեղաւ. 83էն կտակեալ էին շատ մ'առկախ խնդիրներ, վէճի եւ գծառութեան պատճառներ: Ամենէն հրատապ խնդիրներն էին կամալուծեալ ազգային ժողովոյ ընտրութիւնն, Առաջնորդ փոխանորդին դալու կամ չգալու, եւ շատ մը ողորմելի հաշիւներու կարգադրութեանց խնդիրներն:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ՝ որ ըստ սահմանադրութեան օրինաց, Ղեւոնդ Եպիսկոպոսի նախաձեռնութեամբ ընտրուած եւ երկու տարուոյ չափ շարունակած էր, ինքնին լուծուեցաւ, իբրեւ անյարմար մեր վիճակայնոց եւ տեղացւոց ճաշակին եւ կարողութեան: Ժամանակ մը ազգային գործերը տարուբերելէ յետոյ, վերջապէս առանց քուէարկութեան եւ ժողովրդեան կամաց, Բաղաւաթի Ժողով անուն մարմին մը կազմակերպեցաւ 15 անդամք: Սա Առաջնորդական խնդիրը վերջնականապէս լուծեց. Կրթական խնդիրն եւս բաւական լաւ ճանբու մէջ դրած էր, երբ զանգակի խնդիր մը ամէն բան խանգարեց: Եոզղատու ազգային եկեղեցին զանգակ չունենալով, շատ անգամ խնդիր եղած էր զանգակ մը ձուլելու. բայց վտրպետ չը գտնուելուն յետաձգուած էր: Կարեւոր մը ազգային ժողովոյ ներկայանալով, նպատաւոր պայմաններով կը խոստանար ձուլել: Ժողովն երկուքի բաժնուեցաւ. մէկ մասն կը պնդէր որ, աւելի ապահով է Եւրոպայէն բերել տալ. իսկ միւսն՝ որովհետեւ 200 հոխայէն աւելի պղինձ ժողոված էր ժողովրդէն, հակառակը կը պահանջէր: Շատ մը անհաճոյ եւ վիրտուրիչ ցոյցերէ, ցաւալի միջադէպերէ յետոյ, որք անջնջելի արատ բերին սոյն

գծառութեանց պարագլուխներուն, գործը բոլորովին խառնուեցաւ եւ բռնն կրից ներքեւ ժողովականը ոմանք հրաժարեցան. զանգակը թէեւ այսչափ ձայն հանած էր, չը կրցաւ ձուլիլ սակայն:

Ժողովոյ մնացեալը անդամք եւս դադարեցուն նիստերն. որովհետեւ դպրոցական խնդիրն օրըստօրէ կը կնճռոտէր եւ բոլորեցունց խիղճը կը բողբէր, դեկտեմբերի սկիզբներն միապետականը սկսան խորհիլ սոյն նիւթոյն վրայ, եւ կարող անձերէ ուսումնական խորհուրդ մ'ընտրելով նորա լիազօր իշխանութիւն տուին սոյն խնդիրն կարգադրելու:

ԱՌԱՋ ՆՈՐԳԱՅԱՆ խնդիրն՝ ինչպէս ըսենք, կարգադրուած է. Ղեւոնդ Եպիսկոպոս վիճակիս Առաջնորդական Փոխանորդի պաշտօնէն թէ ի Պատրիարքարանէ եւ թէ ի տեղացւոց հրաժարեալ հրատարակուած է. կուսակցութիւնը դադրած են գործելէ եւ ամենայն ինչ խաղաղ է յայտմ:

Կրթ. Ա. ԿԱՆ խնդիրն յանձնուեցաւ լիազօր յանձնախումբի մը, ոյր անդամք են՝ Ն. Սահակեան, Պ. Յակոբեան, Ա. Սպանեան, Գր. Քիւրքճեան եւ Ս. Գաբրիէլեան տեարք, որք փորձառու եւ կարող անձանց հաւքաւ կը վայելեն: Սոցա տրամադրութեան տակ դրուեցաւ 280 ոսկւոյ գումար մը, 8000 դահ. աշակերտաց ամսաթոշակներէն, 6000 եկեղեցիէն, 5000 խանութներէն, 15000 արժէթղթերէն: Բաց աստի շահութեան շահութեան մը կազմուեցաւ որ տարուէ տարի 5000 դահ. եկան պիտի վճարէ լիազօրին: Նաեւ հետզհետէ առկա հաշիւներու կարգադրութենէ դոյացեալ գումարը եւս սոյն նպատակին պիտի յատկանայ, որոյ մասին ի ստորեւ պիտի խօսինք: Չմոռնանք յիշելու որ, այդ 26 անձերէ բաղկացեալ օժանդակ յանձնաժողովն իւր առաջին վճարքն ըրաւ:

Գանք վարժարանաց իւրաքանչիւրին վիճակին:

Մայր—Վարժարան մանչերուն՝ որ կը բաղկանայ ծաղկոցէ մը 2 ընտելարանէ եւ նախակրթարանի կարգերէ, կը պարունակէ վեց դասատուներ եւ 350 աշակերտներ: Սոյն վարժարանն նախաձեռնի եւ բարեկարգ վիճակի մը տիրացած է շնորհիւ Ուսումնական խորհրդոյ եւ Տեսուչ Սիմոն Էֆ.

Հէքիմեանի : Կը դասախօսուին՝ Պատ. Ագ-
գաց, Պատ. Ազգային, Կրօնագիտութիւն,
Քաղ. Տնտեսութիւն, Հայ. Գաղ. Տաճկե-
րէն, Աճէպրա, Թուաբանութիւն, Աշխար-
հագրութիւն : Ունի ուսուցչական ընտիր
խումբ մը, որոյ վրայ պիտի աւելնայ նոր
մը, հաւանականաբար Կեդր. վարչ. Ու-
սումն. խորհրդոյ ջանիւք : Պարտիմ յիշել
Մեծ. Տեսչին եւ Տնօրէն-Դասատու Տխար
Սմբատայ անձնուէր աշխատութիւններն :

Ինչպէս որ գիտենք, Երզրատ ունեցած
չէր մինչեւ ցարդ սոյնօրինակ բարեկարգ
վարժարան մը :

Իցի՛ւ թէ շարունակէր սոյն նախանձելի
վիճակն եւ բարի օրինակ լինէր այլոց :

Վահանէան մասնաւոր վարժարան մանչե-
րու մինչեւ վեց ամիս առաջ յոյժ նախան-
ձելի վիճակ մ'ունէր թէեւ, համանուն ըն-
կերութեան ջանիւք եւ Տնօրէն Ա. Յ. Պո-
յաճեան էֆէնտի ի շնորհիւ . բայց Մեծ.
Տնօրէնին ժամանակէ մ'ի վեր մայրաքաղա-
քըդ լինելուն առթիւ, խանգարած է առ-
ջի կարգն ու կանոնն, եւ նորա արժանա-
ւոր յաջորդ մը չլինելուն տարտամ վիճակ
մ'ունի : Ընկերութիւնը կը խորհի միացնել
վարժարանն Մայր-դպրոցի հետ . տարեկան
ծախքն է 50 ոսկի . թիւ աշակերտաց 90 .
երկու խաֆաներու հսկողութեան յանձնը-
ւած է :

Համագոյն վարժարանք եւս, որք ժա-
մանակ մը յոյժ փայլուն վիճակ մ'ունէին,
այժմ առաջնոյն հակառակ յոյժ խեղճ են,
գրեթէ իրենց Տնօրէնին բացակայութեան
առթիւ : Վեց ամիսէ ի վեր հոգաբարձու-
թեան ջանքն ի գերեւ ելած է կանոնաւոր
ընթացքի վերածելու սոյն վիճակը : Սոյն եր-
կու վարժարանաց միոյն մէջ կը գտնուին
30 աշակերտ, տարեկան ծախք 28 ոսկի,
եւ միւսոյն մէջ 50 աշակերտուհիք : Ծախք
18 ոսկի, դասատուք 2 . մինչդեռ առաջ
ունեցած են 150 աշակերտք եւ 90 ոսկեոյ
ծախք :

Խորէնէան ծխական վարժարանն ունի
ծաղկոց մը միայն եւ 30 աշակերտ . սոյն
ծաղկոցն կը կառավարուի խաֆայի մը եւ
Տնօրէնի մը միջոցաւ :

Օրէորդաց վարժարանն՝ իւր նախկին խեղճ
վիճակին մէջ է : Երկու Երզրատուհիք կ'ու-
սուցանեն հայերէն հասարակ ընթերցմունք

եւ դրամարժութիւն : Յուսարի է որ, հո-
գաբարձութիւնն զսա եւս կարգադրելու
ձեռնարկէ : Թիւ աշակերտուհեաց 70 : —

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՅ վիճակն չի կրնար դո-
հացուցիչ նկատուել . ասոնցմէ

Անշուշտ ընկերա-լինան՝ դեռ իւր տար-
տամ վիճակէն ազատած չէ :

Սեֆեան ընկերա-լինը կազմուած է
1879 մայիսին, նպատակ ունենալով Երզ-
րատու վիճակին այն է Պողոքի նա-
հանգին կեդրոնը վարժարան մը բանալով
վիճակայնոց երկրագործութիւն եւ այլ օգ-
տակար ուսմունք ուսուցանել . ընկերու-
թեան գործադիր ժողովն գործակատար
կարգեց իրեն զՊ. Մ. Սէմէրճեան, որ Պո-
ղոքի գիւղերն երկար ատեն վարժապե-
տած է :

Աւերակցի Դանիէլ վարդապետի հետ
երկու տարիէն աւելի յիշեալ անձը հանդա-
նակութեան համար պտըտեցաւ, երջանկա-
յիշատակ Ներսէս Սրբազանի կոնդակաւ,
բայց երկար ատեն սպըտելէյետոյ հանդա-
նակեալ գումարն՝ Դանիէլ վարդապետ ա-
ռածին պէս Ս. Սարգսի վանքը քաշուեցաւ :
Այնուհետեւ Ղեւոնդ Կալիսկոպոսի կոնդա-
կաւ տարիի մը չափ եւս Հայաստանի
գիւղերը շրջագայեցաւ : Հանդանակեալ
գումարով Պողոքի գիւղերէն Դերգիլիի մէջ
190 ոսկեոյ տուն մը դնուելով, 1882 փետր-
վին դպրոց մը բացուեցաւ, տարեկան 20
ոսկի ծախք յատկացուելով : Եւ երեք տա-
րիէ ի վեր կը շարունակէ անդ, առանց ուէ
օգտի, որովհետեւ դպրոցին ծախքը երկու
տարի է որ Դերգիլի գիւղի հայ հասարա-
կութիւնը կը հայթայթէ :

Մինչեւ ցարդ հանդանակեալ գումարն
51,555 դահեկան է, թո՛ղ գիւղացւոց տը-
ւած ցորենն եւ այլ արմտին : Այս գումարին
մէկ մասն՝ Քաղ. ժողովոյ անդամոց ունեց,
մէկ մասն գործակատարին եւ մէկ ուրիշ
մասն՝ ուրիշ մարդու մը վրայ կը կենայ, եւ
յայտնի չէ թէ ե՞րբ պիտի իրականանայ
նպատակը եւ ի՞նչ արդիւնք պիտի ունե-
նայ :

ՀԱՇԻԻՆԵՐՈՒ խնդիրն եւս անցեալ տա-
րի-մեծ յուզում հանեց, եւ թերեւս ներ-
կայ տարուան ընթացքին մէջ չափազանց
պիտի յուզուի : Ասոնցմէ մին,

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՍՈՎԵԼՈՅ ՀԱՆԳԱՆԱ-

Պատուպէս որ բնաւ առիթ չէր փախցնէր Ն. Բարձրապատուութեան տանելու անոր հետաքրքրութեան արժանի համարուող լուրերը, նպաստաւոր կերպով խօսեցաւ իր տեսած փոքրիկ ակմբին եւ զայն կազմող անձանց նկատմամբ :

Կարդինալը այդ գումարմանց գաղափարը գովելէ զինի, Պատուպէսին հարցուց թէ արդեօք չէին ուզեր կազմաւորեալ մարմին մ'ընել եւ կանոնադրապէս գումարուիլ հանրային հեղինակութեամբ մը: Պատուպէս պատասխանած ըլլալով թէ, ըստ իւր կարծեաց, այդ առաջարկ ուրախութեամբ պիտի ընդունուէր, Կարդինալն յանձնարարեց առաջարկել զայն այդ պարոնայց եւ իւր հովանաւորութիւնը նուիրել իրենց ակմբին համար, ըսելով թէ հրովարտակով եւ իւրաքանչիւրին ուրոյն պիտի արտայայտէր իւր համակրանքն զոր ամէն առթիւ չը զլանալ խոստացաւ :

Պէտք է ըսենք, քանի որ Բէլիսոն կը վկայէ, երբ թէ այս բարեյոժարութիւնը փոքրիկ ակմբին անդամաց հաղորդուեցաւ, «այդ պարոններէ ո՛չ մին չը ծածկեց իւր տհաճութիւնը, ցաւ յայտնելով որ գուցէ իրենց եղած այդ պատիւը պիտի խանդարէ իրենց տեսակցութեան քաղցրութիւնն ու ընտանութիւնը» :

Մինչեւ իսկ խորհրդակցութիւն մ'ըրին գիտնալու համար թէ կարելի չէ՞ր արդեօք յարգանք մերժել Ն. Բարձրութեան առաջարկներն : Բայց հոն էր Շաբլէն, բանաստեղծը, որ յայտնեց իր բարեկամաց թէ յիշաւ չատ լաւ կ'ըլլար որ իրենց գումարունք անձանոթ մնացած ըլլային, բայց քանի որ գործն այդ վիճակին հասած էր, ա'լ ազատ չէին ուզածնին ընել, թէ իրենց գործն այնպիսի մէկու մը հետ էր որ ուզածն ընելու չպիտի վարանի, թէ թըշնամանք պիտի համարէր իւր պաշտպանութիւնն առ ոչինչ դրել, եւ թէ անկասկած իրենց գումարմանց արգելք պիտի լինէր... :

Այս պատճառաբանութեանց վրայ որը իրենց արժէքն ունէին, որոշուեցաւ աղաչել զՊ. Պատուպէս խոնարհաբար շնորհակալութիւն յայտնել առ Պ. Կարդինալն իրենց ըրած պատուոյն համար եւ վստահացնել թէ այդքան բարձր խորհուրդ մը իսկ եթէ ունեցած չըլլային, չը պիտի թե-

րանային ըստ իւր կամաց վարուելու : Երբ իւր ընծայից փոխան այս պատասխանն առաւ, Կարդինալն, որ այս հաստատութեան առթիւ իւր անուան փառք մը կ'ընդհնմարէր, խնայեալ տուաւ այդ պարոնայց որ ըստ սովորութեան երբ ի ժողով գումարին, որոշէն ո՛չ միայն անդամաց թիւն յաւելուլ, այլ նաեւ ծրագրել այն օրէնքը զոր ապագային այդ ընկերութեան տալ յարմար կը թուէր իրենց :

Մերոնք գործի ձեռնարկեցին, եւ իրենց նոր ընկերներն որոշելէ զինի, իրենց գործն եղաւ ընտրել տնօրէն մը, դիւանապետ մը եւ քարտուղար մը որ պաշտօն կը վարէր ցկեանա, ինչպէս որ պշտաւ : Եւ Գաղղիական Ակադեմիոյ հիմնադրութիւնը կը հաշուի ատենադրութենէ մը զոր դրած է առաջին մշտնջենական քարտուղարն, Կոնրարտ, 1634 մարտ 15ին :

Չկարծուի թէ Կարդինալն միջամտութիւնը կը բաւէր միայն, որպէս զի գիտնոց այդ կաճառ օրինական վաւերացում ստանայ, զի թէեւ հիմնադրութեան արքունի հրովարտակը թագաւորէն հաստատուած էր՝ սակայն խորհրդարանին վաւերացումն ու արձանագրութիւնը կը մնար դեռ, եւ գործն սյնչափ դանդաղ գնաց որ հապիւ 1637ին, այն է խորհրդարանին քննութեան ենթարկուելէն երկու տարի ու կէս ետք, արքունի հրովարտակը պահանջուած վաւերացումն ստացաւ :

«Ինչո՞ւ ուրեմն, կը հարցնէ Բէլիսոն, այնչափ իմաստուն մարմին մը, որպէս է խորհրդարանն Բարիդու, այնչափ դժուար կը հաւանէր ո՛չ միայն այնքան անմեղձ նոյն իսկ այնքան գովելի գաղափարի մը :»

Չայդ հասկնալու համար պէտք է յիշել թէ Կարդինալը որ թաղաւորական հեղինակութիւնն առաւել քան երբեք բարձրացուց, սիրելի էր ոմանց, նախանձելի՝ այլոց, ատելի եւ դարչելի՝ բազմաց, ահաւոր եւ զարհուրելի՝ համարեա ամենուն :

Արդ՝ բացի այն զի Ակադեմիան կը նշկատուէր իբրեւ Կարդինալեան գործ մը, այլ նաեւ կը դատէին զայն ի բարին կամ ի չարն, ըստ արտադրութեան զոր առայն ունէր անձնիւր ոք : Ոմանք կը պնդէին թէ այդ գաղափար ծայրագոյն գովեստից արժանի է, զի պերճախօսութեան մասին

անցեալ դարերէն դերազանց միճակի մը մէջ պիտի դնէր երկիրը՝ այլք, ընդհակառակն, այդ ծրագիրը ծաղր ու ծանակ կ'առնէին կատակներով եւ երգիծաբանութեամբ, ըսելով թէ Ակադեմիան նոր բառեր պիտի հնարէ եւ նոր օրէնք պիտի դնէ այն բանին համար որ օրէնք չը կրնար ընդունիլ այս կէտին վրայ մեծ յուզմունք կը տիրէր նաեւ ի մէջ պաշտօնակալաց եւ այլ պալատականաց որք ըսելով թէ այդ արիսպագոսը պաշտօն պիտի ունենայ հին լեզուն բարենորոգել եւ անոր մաքրութեան հոգ տանիլ, վերաւորեալ կ'ըզային զանձինս իրենց լեզուի մասին:

Բայց վերջապէս ամէն ինչ որ նախարարէն կուգար, կասկածելի էր բնականաբար երեւելի անձինք ինչպէս եւ խուժանը չը գիտէին թէ այդ ծաղկանց տակ օձ պահուած չէր, թէ այդ հաստատութեան նոր նեցուկ մը չը պիտի ըլլար Կարդինալեան իշխանութեան, թէ ընկերութիւնն իսկապէս կազմեալ չը պիտի ըլլար անոր (Կարդինալին) արքանեակներէն, իւր տնօրինութիւններն ջատագովելու եւ այլոց արարքն ու թուիքը լրտեսելու համար:

Բաց աստի լուր կը տարածուէր թէ ութսուն հազար ռսկի պիտի զեղչէր Բարիքու տիղմերուն դրամէն անոնց իւրաքանչիւրին երկու հազար ռսկի թոշակ տալու համար, եւ այսպիսի հարիւր տեսակ լուրեր:

Կարդինալին ստիպողական աղաչանաց վրայ, որ նոյն իսկ սպառնալեաց պէտք զգաց այդ վաւերացումը խնդրելուն առթիւ Աւագ-Թողովէն որ արգելք կ'ըլլար խորհրդարանին, վերջապէս հրովարտակի արձանագրութիւնը տեղի ունեցաւ, բայց սա հետեւեալ դաշամբ որոյ բովանդակութիւնն ընդ նշմարել կուտայ ընդգիմութիւն ներշնչող զգացմանց բնութիւնն. «Այսու միակ պայմանաւ որ Ակադեմիականը հետամուտ պիտի լինին զարգարման, գեղեցկացման եւ զարգացման Փրանսերէն լեզուին եւ իրենց՝ կամ այլոց կամեցողաց հրատարակած գրեւորքն»:

Այսու թագաւորական հրովարտաւորը Ակադեմիոյ անդամոց տրուած առանձնաշնորհմանց ի թիւս կ'երեւէին նաեւ ամէն խնամակալութենէ եւ գինւորական պահակութենէ ազատութիւնն (վերջին պայմանը կը համապատասխանէ արդի ազգային գին-

ւորական ծառայութեան եւ պահնորդութեան) եւ քօֆօրքօֆօ կոչուած իշխանութիւնը, այսինքն — ինչպէս կը բացատրէ Պ. Լըվէ, Բէլիսոնի երկրին վերջին տապաքութեան վրայ իւր յաւելած հմտալից ծանօթութեանց մէջ — այն իրաւունքը որով յետս կը կոչեն իրենց ունենալիք դատերն առաջի աղերսագրական գիւնին, արքունեաց կամ պալատան, առանց ստիպեալ լինելու, ի լրանալ պայմանաժամուն, դիմել ի դաւառս — շնորհք զոր կը վայելին ի զարմէ իշխանք, դուքսեր, ատենակալք, թագադիր պաշտօնակալք եւ այլ բարձրաստիճան անձինք Տէրութեան:

Բէլիսոն կը յաւելու թէ դիւրաւ կրնային ձեռք բերել նաեւ տարեսակաց կամ անձնատրոց բարձումն, բայց յայնժամ ըզոր ահագեմականը աղնուականութեան, եկեղեցականութեան եւ թագաւորի պաշտօնականութեան հանգամանօք արդէն այդ հարկերէն ազատ ըլլալով՝ «իրենց յաջորդներուն իրական ու տեւական շահը նախաւեծար համարեցին բաւական մտացածին պատուոյ մը»:

Ինչ որ ալ ըլլայ, Փրանսական Ակադեմիայն անկէ ի վեր գոյութիւն ունի իբրեւ օրինապէս կալմաւորեալ մարմին մը:

* Ի սկզբան անդ, ինչպէս տեսանք, Ակադեմիայն կը գումարուէր իւր անդամոց միոյն տունը, Դուտով. Ժ.Վ.ի օրով Ժողովատեղին էր ի Լուվա, 1793էն ի վեր իւր նիստերը կը կայանան Մալարէնի կառուցած պալատան՝ այն է Չորից Աղբաց նախկին ճեմարանին (որ Գաստիարականութեան Պալատ կը կոչուէր) սրահներէ միոյն մէջ, ուր տարբեր օրեր ալ միւս չորս Ակադեմիայց նիստերը տեղի կ'ունենան: Յայտնի է թէ հինգ ակադեմիայք միանալով կը կազմեն Յրամասայի կըթական Կաճառն, «Էնսիթիթիւ տը Ֆրանս»։ ասոնք են Գաղղ. Ակադեմիայն, Արձանագրութեանց եւ գեղեցիկ դպրութեանց Ակադեմիայն, Գիտութեանց Ակադեմիայն, Գեղարուեստից Ակադեմիայն, Բարոյական եւ Քաղաքական Գիտութեանց Ակադեմիայն:

ծեծեն, որ այս երկնամարմիններ կուլ տը-
ւոյ վիշապաճուկն վախէ իրենց ժխորներէն
ու վախի :

Երբ հացի երկու կտոր մէկմէկի վրայ
դնելով հացախաղ մը շինեն ու գայլի մը
տան, որ ուտէ, մէզը ինքնին կը վարատի :
Յ. ՏՈՒՏՈՒԽԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Կը խնդրուի մեր ՊՈԼՍԵՑԻ ԵՒ ԳԱ-
ԻԱՌԱՅԻ ԱՅՆ ԲՅԱԺԱՆՈՐԴՆԵՐԷՆ,
որոց պայմանաժամը լրացած է և որք
տակաւին մեզ զրկած չեն իրենց բա-
ժանորդագիրն, առ մեզ փութացնել
զայն մինչեւ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՕԳՈՍՏՈՍ 4 :

Կը խնդրուի նմանապէս իրենց բա-
ժանորդագրութիւնը նորոգել ուզող
անձերէն որ փութան մինչեւ ՅԱՌԱ-
ՋԻԿԱՅ ՕԳՈՍՏՈՍ 4 :

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ

1-6 ՅՈՒՆԻՍ 1835

ԱՐՏԱՔԻՆ

Անգլիոյ Երեսփոխանաց Ժողովոյ յունիս
12ի նստին մէջ, Պ. Կլատտոն յայտարարեց
թէ յետ իւր վերջին զեկուցման զոր ըրած
էր Թագուհւոյն, Ն. Վեհափառութիւն
հաճած է ընդունիլ Նախարարութեան հրա-
ժարականն :

Նախարարութեան հրաժարականն ըն-
դունուելէ յետոյ, Լորտ Սալիզբորի Թագուհւ-
ոյն հրաւիրանօք ընդունեց նոր Նախարա-
րութիւնը (պահպանողական) կազմելու պաշ-
տօնը: Եւ թէպէտ բաւական զգուշութիւն
քաշեց պահպանողական կուսակցութեան մէջ
տիրող բաժանմանց պատճառաւ, սակայն
վերջին պահուն հեռագիրը ծանոց թէ յա-
ջողած լինելով, անմիջապէս Ուինտտորի
գլխակը գնացեր է, Թագուհւոյն հաւանու-
թեան ներկայացնելու նոր Նախարարաց
անունները :

— Կը կարծուի թէ Սիւէզի ջրանցին Մի*
ջաղդային Յանձնաժողովն ի Փարիզ եւ Հո-
մի առողջապահական Դեսպանատնորհուրդն
հաւասարադէս ամուլ պիտի մնան, գէթ
առ այժմ, որովհետեւ ցամաքային տէրու-
թիւնը Նգիպտոսի եւ ջրանցի վերաբերեալ
նիւթոց վրայ կարող չեն եղած համաձայ-
նիլ Անգլիոյ հետ :

— Աղետալի լուրեր կը հասնին Քալիֆի
երկրաշարժներուն վրայ : Հովտին մէջ եր-
կիրը բացուած է, կուլ տալով կարգ մը
բնակամարդ գիւղերու : Տաք ջուր եւ ծը-
ծըմբային փոշի դուրս ժայթքած են ճեղ-
քուածներէն : Բերդ մը եւ զինուորական
շտեմարան մը նմանապէս ամբողջովին թաղ-
ուած են : Սաստիկ թշուառութիւն կը տի-
րէ անպատասպար եւ անսունդ մնացած
ստուարաթիւ ժողովրդեան մէջ :

— Աւստրո-Հունգարիոյ ելմական նախա-
րար և Պոսնա-Հէրսէքի գաւառաց գերա-
զոյն տեսուչ Պ. Ֆոն Քալէյ, Մոսկարի եր-
կաթ ուղւոյն բացման առթիւ ճառ մը խօ-
սելով, բացատրեց թէ հարկ պիտի լինի եր-
կաթուղի մը շինել մինչեւ Նովի-Պազարի
գաւառի սահման, աւստրիական վաճա-
ռականութեան առջեւ բանալու համար Ալ-
պանիոյ, Գարատաղի և Սերպիոյ մերձակայ
գաւառներն, ուր ցարդ անգլ. վաճառքնե-
րը տիրած էին հրապարակներուն :

Նախարարին հարցուելով թէ Միգրովի-
ձայէ անգլին երթալու դիտում կ'ա՞յ, Պ.
Քալէյ յայտարարեց բացորոշապէս թէ,
ցորչալի ինք Պոսնիոյ վարչութեան գլուխն
է, երբեք չպիտի հաւանի այդ պիտի անխո-
հեմ ձեռնարկութեան մը, որոյ հետեւանքը
կրնայ լինել միայն ամուլ երկրի մը մէջ
հաստատուիլ և շարունակ կուրի բռնուիլ
ալպանիացի ցեղերուն հետ, զորս հնազան-
դութեան մէջ պահելու համար մեծ քանակ
մը ցմիշտ զինուց ներքեւ ունենալ հարկ է :

— Բեդրսպուրկ կհեռագրեն առ Թաւ. — Նա-
խարարական տաղնապն յԱնգլիա սաստիկ
տալաւորութիւն մ'ըրաւ ի Բեդրսպուրկ: Պ.
Կիրս երկարօրէն խորհրդակցեցաւ Ջարին
հետ, որ անմիջապէս նախարարաց խոր-
հուրդ գումարեց : Բեքլին ծովակալին նա-
ւախումբն, որ Ովկիանոս պիտի երթար,
հրաման ստացաւ Զինանտիոյ ծոցին մէջ
մնալ ցանօրինութիւն : Այս զգուշութեան

պատճառ եղեր է այն երկիւղ թէ Պաշտօն-
նոդականք Ազատականներէն աւելի խստա-
պահանջ կրնան լինիլ Ռուսիոյ նկատմամբ,
և նորէն յարաբերութեանց խանգարում յառ-
աջ կուգայ :

—Աւստրիոյ դաճաժառանգ իշխանն այս
ամառ իւր կնոջ հետ պիտի այցելէ Բեդ-
րսպուրկ, և անտի պիտի երթայ Մոսքուա,
Քիէվ, և մի քանի շաբաթներ Կաւկասիս
պիտի կենայ :

—Անգլիոյ նախարարական տաղնապն ար-
տասովոր ուշադրութեամբ կը դիտուի Եւ-
րոպիոյ ամեն մայրաքաղաքաց մէջ, և զա-
նազան մեկնութեանց առիթ կուտայ :

—Լոնտոնէ կը հեռագրուի յունիս 12ին .

Պ. Կլատտոն բազմաթիւ ուղերձներ կ'ըն-
դունի ամեն կողմերէ . բայց իշխանութեան
վրայ մնալու համար եղած ամեն առաջարկ-
ները կը մերժէ, և ամբողջ նախարարու-
թիւնն յայսմ մասին համամիտ է իրեն : Պ.
Կլատտոն կը պատրաստուի մեկնիլ Տունին
—Սքոթլի Նախարարապետական Պաշտօնա-
րանէն . բայց որովհետեւ Լոնտոնի մէջ մաս-
նաւոր բնակարան չ'ունի, Հառապտուն-Քա-
սըլի գիւղային բնակարանը պիտի քաշուի :

—Հեռագիրը ծանոյց թէ յունիս 12ին հր-
ոյ ճարակ եղած է Լոնտոնի մօտ Սաութ-
Քէնսինգթընի պալատան մէջ Հնդկաստանի
Միւսէնոն : Ըստ նորագոյն անդեկութեանց,
Միւսէնոն յիւրաւի ամբողջովին այրած է,
բայց գրէթէ ամեն թանկագին նիւթերն
որք ի տես հասարակութեան զրուած էին,
կրցած են ազատուիլ : Ուստի վնասն այն-
քան ծանր չէ :

—Սպանիոյ մէջ հնտախտի ճարակման պատ-
ճառաւ, Փրանս սկան կառավարութիւնը
Սպանիայէն եկողներուն դէմ երեք անգոր
Մաքրանոց հաստատեց Բիրէնեան սահմա-
նաց վրայ :

—Մատրիտէ յունիս 11 թուով կը հեռա-
գրուի առ Թայփլ թէ Վալենչիոյ նահանգին
մէջ հնտախտը նոր յառաջդիմութիւններ
չըներ, բայց կ'աւելնայ Մուրչիոյ և Քաս-
դէլլոնի նահանգաց մէջ :

—Ֆրէժիէպալ յունիս 12 թուով կը հերքէ
Պելլրատի լրագրաց տարածած լուրը թէ
ապստամբութիւն ծագեր է ի Հէրսէք, և
կը յայտարարէ թէ Սերպիոյ Ազգային կու-
սակցութեան փափաքն է խռովութիւններ

յարուցանել Պոննա-Հէրսէքի մէջ, յուսարով
օդուտ քաղել անոնցմէ, ի նպաստ սլաւեան
դատին :

Ն Ե Ր Ք Ի Ն

Երրորդ կարգի պաշտօնատարութեան
(Սալիսէ) քաղաքային աստիճանով Իզմիրի
գաւառին կեդրոնական երկրագործական
Քննիչ անուանեցաւ Հայկազն էֆէնտի Պէկ-
եան՝ որ Ֆրանսայի Երկրագործական Ճեմա-
րանէն ելած է վկայականաւ :

—Վէհ. Սուլթանը բարեհաճեցաւ յանուն
Իւր եւ իւր Կայսերական դերդաստանին
180,000 զրուէ նուիրել ի նպաստ Ճիպպիլի
հրդեհի զոհերուն :

—Ելմտական նախարարութիւնն 150,000
ոսկւոյ փոխառութիւն մը կնքած լինելով
Օսմ. Կայս. Պանքային հետ, ի հաշիւ այդ
փոխառութեան 60,000 ոսկի ստացաւ :

—Բ. Դրան եւ Ֆէնէրի Պատրիարքարա-
նին ուղղեալ հեռագիրը կը ծանուցանեն
թէ Անտիօքայ Պատրիարքի ընտրութեան
համար վերջնական քուէարկութիւն կա-
տարուելով, Սկիտուպոլիսի Մէտրապոլիտ
Տ. Երասիմոս քուէից առաւելութեամբ ընտ-
րուեր է Պատրիարք Անտիօքայ :

—Բէժիի ընդհանուր Տնօրէն Պ. Լէնկ
որոյ հրաժարականն ընդունուած է արդէն,
մտադիր է ի մօտոյ վերջնապէս քաշուիլ
գործէ : Կը կարծուի թէ Անուղղակի Տրոց
տնօրէն Պ. Օպուանօ պիտի յաջորդէ Պ.
Լէնկի . կ'ըսուի նաեւ թէ այժմեան երեք
դեր-տնօրէնք՝ Պէրթրամ էֆէնտի, Պ. Պօլէս
եւ Հասան էֆէնտի պիտի վարեն դսրծերն,
առանց ընդհանուր տնօրէն մ'ունենալու :
Վերջնական որոշումն յայտնի չէ դեռ :

—Վոսիտրի ասիական եղերաց քանի մը
այգիներուն մէջ, ինչպէս նաեւ Արեւելեան-
Ռումէլիի Սթանիաքա գաւառակին այգիներ-
ուն մէջ Որթաճճի (Ֆէլթաթթա) տարածուած
լինելով, տեղական իշխանութիւնք միջոցներ
ձեռք առած են բնաջինջ ընելու համար ա-
ւելիւ ճճին որ անդարմանելի վնասներ կը
հասցնէ երկրագործութեան :

—Տեղական թերթերը կը ծանուցանեն
թէ հանրօգուտ շինութեանց ընդհ. բնիչ
Սըրիի փաշա պաշտօնանկ ըրերէ Ադրիա-

ԿՈՒԹԵԱՆ հաշիւն լինելով, ըստ ինքեան մեծ կարեւորութիւն ունի եւ զոր վաւերական աղբիւրներէ քաղելով, Սովետաց Կեդրոնական Յանձնաժողովոյ Ատենապետ Ս. Կիւլպէնկեան էֆէնտիի ուշադրութեան կը յանձնենք, որ բարեհաճի ազդու տնօրինութիւններ ընել, մանաւանդ այնպիսի ժամանակ մը՝ յորում Մարաշի, Հաճնոյ եւ Ձէյթունի հրկիղեալք կը տառապին:

Երկրորդ մասնաժողովը հետեւեալ կերպով բաշխած է վիճակայնոց Դասեկան Տոմս

5000	500	Մատենի եւ Ագտաղի գաւառակաց Հայ գիւղերուն.
5000	540	Սորգուն եւ Գարամաղարա գաւառի գիւղերուն.
5000	540	Գրգըլգոճա գաւառի Հայոց գիւղերուն
8000	840	Պողաղլայքանի գաւառի Հայ գիւղերուն
3500	470	Սուկիուրուի Թաղական Խորհուրդին տեղւոյն ազգայնոց համար.
3500	470	Զորուսի Թաղական Խորհուրդին տեղացի ազգայնոց համար.
30000	2680	Երկրակալ Ս. Խ. Կ. Յանձնաժողովին եւ բաշխեալ:

Ինչպէս կը տեսնուի, Երկրորդ մասնակցած չէ այն հանգանակութեան. վիճակայինք՝ գովելի եռանդեամբ մասնակցեցան այն հանգանակութեան, եւ հանգանակութեան գործն շատ յաջող յառաջեց: Այսօր այն գումարներն Ասլանեան Բեմի, Գէորդ եւ Կարապետ անուն անձանց վրայ կը մընան եւ պատրաստ ենք հաստատել, եթէ Սովետաց Յանձնաժողովը բարեհաճի ուշադրութեան առնուլ:

Բաց յայտմանէ կան նաեւ հետեւեալներն զորս կը յանձնենք առ որ անկ է.

Դասհեկան	
10,000	Գաղաթաիոյ Սովեթոց հանգանակութեանէն Ասլանեան Բեմիի վրայ մնացած եւ թէ տեղւոյս եւ թէ Գաղաթաիոյ կուսակալութեան դատարանէն վճարեալ է, բայց դեռ անվճար կը մնայ .
30,000	Քոնստիտի հաշուէն այլ եւ այլ անձանց վրայ մնաւանդ Ասլանեաններու վրայ .
42,000	Տոնիկեան Հաճի Սարգիս անուն անձի վրայ հանգանակեալ 45,000 զուրուշէն մնացած .
42,000	Ասլանեան Եղիա անձին վրայ դպրոցի շինութեան հաշուէն մնացորդ .
3,000	Լուսասփիւռ ընկերութեան գրամագլուխը Եսայեան, Գրգըրբեան եւ Բագլահանի վրայ .
3,000	Եսայեան Մատթեոսի վրայ .
51,335	Սեթեան ընկերութեան մեծաւ մասամբ առ կախ հաշուէն
444,335	Կոստեալ հաշիւ 1883 թուականէն 1884ի:

Վ.ՏԱՐԱՆԳԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԱՂԿԵԿ ԱՂՋԻԿ
(ԱՇԸԳ ՇԻՐԻՆԷ ԱՍԱՑԵԱԼ)

Աղկէկ աղջիկ, Ժողով՝ փեճիգ մաղերէ,
Շատ կը սիրեմ էրեսիդ գամջաներէ.
Քեզի քիմի ետք մի կ'ուզիմ չիմ գտնայ,
Գտիր իմ չիմ կարնայ քաշի նազերէ:

Աղկէկ աղջիկ, աչքիդ սիրտիս ծակեր է,
Վարդ էրեսիդ ներսիս կրակ վառեր է,
Աշըք Շերին քեզի սրտանց սիրեր է:

Աղկէկ աղջիկ ո՞ւր կ'ոյ տիս էրերուն,
Մամիդ ինչե՛ր քաշեր քեզի բերելուն.
Աղի լեղի արտասուք թափիր օղբացիր,
Քըշիր քուն չէ քնիւր օրբան օրելուն:

Աղկէկ աղջիկ եսայն.

Աղկէկ աղջիկ ո՞ւրցէն կիգաս ձիաւոր.
Ուր կ'ոյրտիս ինչո՞ւ տրտում ագաւոր.
Եկո, մասքան լարինք, նստինք քեզի մէջ,
Ծաղիկ թոփիմ, պսակ շինիմ մազերուդ:

Աղկէկ աղջիկ եսայն.

Աղկէկ աղջիկ էրիս մ'ունիս լայլայ է,
Խոյնդի, խուլքիթի շատ լաւ ալա է.
Պոյնդ ֆիտան եասամին ծառ կ'ըլնի,
Արաքիդի սաւ ճակատդ ալա սալայ է:

Աղկէկ աղջիկ եսայն.

Հերիք աղկէկ, դու եսիկի խեւցես,
Մամիդ քեզի խիտ խորտիկ ծներ է,
Երես մ'ունիս շամս ու գամար կ'ըլնի,
Տեսնողներէ կ'ըսին ամիս նորեր է:

Աղկէկ աղջիկ եսայն.

Վիզիդ իկայ պողմանայ օսկի փողերով,
Իգաս ծուցիս պառկիս գումաշ տեղերով.
Ալմասթրաշ քամար զմրութ օղերով,
Ըմէն ատեն զարթման լաթերով եղնայ:

Աղկէկ աղջիկ եսայն.

Կերենին հիմ հայիս եաման էրեցիր,
Ձիմ գինայ ինչ աման եսի ամեցիր.
Քըշիր ջորիկ աչքիս քուն չի մտնայ,
Հէյ պէպաթ, էր իս վարձայի էրեցիր:

Աղկէկ աղջիկ եսայն.

Հաստեց

Հ. ԵԿԻՆՅԱՆ

Աշըք Շիրին ծաղկած է երկու դար ա-
ռ աջ և մեռած է Տիգրանակերտի մէջ թող-

լով չատ մ'երգեր այլ եւ այլ նիւթերու վը-
րայ գրուած . այս Աշգի երգերէն բեկոր-
ներ ի լոյս ընծայուած են արդէն . շատեր
այ գրչագիր մնացած են այլ եւ այլ կողմեր ,
Գեր . Գարեգին Վ . Սրուանձտեանց տպած
է քանի մը կտորներ Աշգի երգերէն , սորա
անկատար կտորներ են . մեր ձեռք ձգած
մի տետրակի մէջ աւելի հարազատներ գըտ-
նելով պիտի փութամ հետզհետէ ի լոյս ըն-
ծայել Մասի մէջ :

ՆՈՅՆ

ԳԱԻԱՌԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՅԹ

Ն Ա Ի Ա Պ Ա Շ Ա Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

Ի ԽՈՌԱԹԻԿ ԳԻՒՂ

Եթէ ծիածանի տակէն տղայ մ'անցնի ,
աղջիկ կ'ըլլայ . եթէ աղջիկ մ'անցնի , տղայ
կ'ըլլայ , կ'ըսեն :

Եթէ թռնիր մ'իջեցնեն տեղ մը , տա-
նուտէր կամ տանտիկինը կը մեռնի . եթէ
ոտքերնին թռնրի մէջ երերցնեն , տան պարտ-
քը կը չատնայ :

Մածնի մակարդն ու խմորի հայտը չեն
արեւեր :

Քիչ մը սխտոր չորի մը մէջ կը կապեն ,
կը կախեն տղայի վիզն , որ չաչքելի :

Եթէ մէկի մը հանդիպին , որ դատարկ
աման մ'ունի ձեռքն , կամ Տէրտէրի մը ,
չարիք կը համարին զայն :

Լուսնաշրջանի մը միջոցին ամեն բարիք
ու չարիք այն անձին կը վերադրեն , զոր ,
նոր լուսինը դիտելէն վերջ , կը տեսնեն .
մասնաւոր փախաբով մը նոր լուսինը կը
նային խաւթիկցիներն ու կը խաչակնքեն
զիրենք :

Քարշաղկը կը ծաղկեն , որ դեւերը գիր
չգրեն անոր վրայ . կը վախեն , որ սատա-
նան կը նորէ Աղամայ մուրհակագիրն :

Եթէ կատու մ'սպաննէ մէկն , «եօթ ժամ
ու պատարագ» ընէ , չփրկուիր :

Եղնդի կտրուքը կը խորեն ու «գնա դա-
տաստան ինձ տեղ բռնէ» , կ'ըսեն . գլխի
մազերը կը խնկեն ու եկեղեցւոյ մի կողմը
կը պահեն . մազի կտրուքը չեն կոխեր , որ
գլխացաւ չունենան :

Առաւօտ երբ դրախտի դռները բաց-
ուին , աքաղաղները դրան ծխնիի ձայնը կը
լսեն ու կը ձայնեն , եթէ դադաղն ծեծէ
ժամկոչն , մարդ կը մեռնի . մեռելաթաղի
ատեն եթէ Տէրտէրն ետին նայի , նորէն
մարդ կը մեռնի . մեռելներն երբեմն տուն
կուգան , կ'ըսեն , ու ատենով տուն եկող
մեռելի մը դերեղմանաբարը դամբը են :

Ճամբաբաժնին տեղերը , ջաղացները դեւ
կայ , կ'ըսեն : «Գիշեր մը դեւերն կապեցին ,
լեռը տարան զիս , ու եթէ Աստուծոյ ա-
նունը չթոթովէի , կը մեռցնէին զիս» , կ'ը-
սէր ջաղացական մը : Երբ դեւերն հարսնիք
ընեն , կիներու սեթեւեթի շորերը գիշեր-
ները կը տանին , կը հագնին ու կեղտոտե-
լով կը բերեն իրենց տեղերը կը գնեն , եւ
որպէս զի դեւերն շորերուն չմոտենան , կի-
ներն ասեղ կ'անցընեն իրենց շորերու մէջ :

Եթէ բանի մը վրայ խօսին ու մէկը վը-
ռընդտայ կամ զանգը զարնէ , նշան է , որ
խօսքի առարկայ եղած խնդիրը կը յաջողի :

Եթէ իրիկուն կտոր մը հաց թողուն թոն-
րի մէջ , ու կին մը առտուն այն հացի կը-
տորն ուտէ , իր բոլոր տղաքները կը կոր-
սընցունէ , կ'ըսեն : Թիզ կը չափեն , դարի
կը նետեն , վիճակ կը բանան , թուղթ կը-
նեն :

Երբ կովը ծնի , յետանով կը շփեն , կը
սրեն , հորթի շրթունքները , որ ախոր-
ժակը բանան ու «սար երթաս , ձոր եր-
թաս , քո տիրու տուն դաս» , կ'ըսեն իրեն .
եթէ կորի , թեւով մը չերեփը սիւնը կը կա-
պեն , որ նորէն տունը դայ : Երբ կովը
մնուրն լիզեն , ձիւն կուգայ , կ'ըսեն :

Բոլոր կենդանիները արեւելքի կողմը
դարձնելով կը մորթեն . կիները չեն մոր-
թեր , նոյնպէս այն տղաքները , որք քաւոր
չեն եղեր . ասոնց մորթուքը հարած է :

Անծեղի չուլը դէշ նշան է . եթէ հաւը
խօսի , ձախողանք է , կը մորթեն . եթէ հա-
ւերը թռչտին , կուլ է : Եթէ կատուն թա-
թէ իր երեսն , հիւր կուգայ , կ'ըսեն :

Եթէ ընկուզենի մը տնիէ , պտուղը չը
կերած կը մեռնի : Ջրի մէջ թքնել մեղք է :

Եթէ մէկը ջերմէ ու հաղորդուի , ջեր-
մը կը պսակուի իր վրայ . ըսել կ'ուզեն երբ
մեռնի , նոր ջերմը կը կտրի :

Երբ արեգակը , լուսինը խաւարին , կաթ-
սաներն , եռոցներն , եփոցներն չարաչար կը

նուպոլսոյ դաւառին հանրօգուտ չինու-
թեանց տնօրէն Ֆասօ Էֆէնտին որ մեծա-
գանակ գումարներ բաց ունի եղեր իւր
հաշոց մէջ:

— Հանեայէն առնուած հեռագիրքը կը
ծանուցանեն թէ Կրէտէի երեսփոխանական
Ժողովոյ եւ Կուսակալ Սափա փաշայի մի-
ջեւ ծագած մէջը խաղաղապէս հարթուեր
է օտար հիւպատոսաց միջամտութեան չնոր-
հիւ:

— Սուրիայէն կը գրեն արաբական Էլ-
Ահրամ լրագրոյն թէ այդ գաւառի կառա-
վարական երկրաչափ Պէշարէ Էֆէնտի Սու-
րիոյ մէջ երկաթուղի մը շինելու համար ծը-
րադիր մը մատուցեր է: Այդ երկաթուղի-
ւոյ գիծը պիտի ձգուի Պէշուրէն մինչեւ
Տըմշէք եւ Հօրան, երկայնութիւնն 235
հարիւրամէթրէն աւելի չ'պիտի լինի եւ
ծախքն իբր 25,000,000 Փրանք: Եթէ այդ
երկաթուղին աւարտի, ծախքն հանելէ յե-
տոյ պիտի կարենայ եղեր տարին 1,346,800
Փրանք հասոյթ արտադրել:

— Այտընի կուսակալութեան գլխաւոր
երկրաչափ Ապանեան Գէորգ Էֆէնտի քա-
նի մ'օրէ ի վեր մայրաքաղաքս եկած է ար-
ձակուրդով:

— Բօլիէի Գորէֆֆէնէն կը ծանուցանէ թէ
Պոսնացի իբր 500 խալամ գաղթականք այս
պահուս Ալպանիայէն կ'անցնին Փոքր Ասիա
երթալու համար: Ասոնք Բիրէտ ցեղի կը
պատկանին, և կ'աղբէին աւազակութեամբ,
իրենց մասնագիտութիւն ըրած լինելով
Օսմ. զօրաց յատկացեալ պաշարաց կարա-
ւանները կողոպտել: Բայց յորմէ հետէ գը-
րաւեցաւ Պոսնա, պարտաւորեցան թողուլ
այս կեանք, և այժմ որոշած են գաղթել:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ամեն. Խրիմեան Հայրիկ մայրաքաղաքս
հասաւ այս երկուշաբթի առաւօտ Մախսու-
սէի Սէլաիէ շոգենաւով:

Թէպէտ կիրակի առաւօտ իբր 500 գա-
ւառացի եւ Պոլսեցի ազգայինք յատուկ շո-
գենաւով Գափագ երթալով մինչեւ երեկոյ
սպասած էին Ն. Սրբազնութիւնը գիմաւո-
րելու համար, սակայն մինչեւ ժամ 12 Սե-
լաիէ չ'երեւնալով, ետ դարձած էին: 50ի

չափ ազգայինք միայն Պէօյիւքտէրէ ելան եւ
գիւերն հոն անցուցին: Յաջորդ առաւօ-
տուն, ժամ 11ին Սէլաիէ շոգենաւն Անատո-
լու Գափագ հասաւ եւ Պէօյիւքտէրէ սպա-
սող սլաւոնիրակը վեց նաւակով ու մակոյ-
քով դիմաւորեցին զՆ. Սրբազնութիւն եւ
Պէօյիւքտէրէ տարին ուր Էգնայեանց տունն
իջաւ: Քանի մը հարիւր ազգայինք կ'սպա-
սէին անդ ի տես Սիրելի Հայրիկին: Ն. Սըր-
բազնութիւնը Պէօյիւքտէրէի մէջ քիչ մը
հանգստանալէ յետոյ, յատուկ շոգենակոյ-
կով Գուզլուճուք անցաւ առաջնորդու-
թեամբ 60ի չափ հրաւիրակաց: Մեծ հան-
դէսով ընդ առաջ ելան եկեղեցական եւ
աշխարհական ազգայինք եւ խուռն բազ-
մաթիւն որք տարին զՍ. Հայրիկն յեկեղեցի
ուր խօսեցաւ Ժողովրդեան, յիշեցնելով թէ
այս 12րդ անգամն է որ կը չափէր զՍեւ
ծով, եւ հերքելով իւր վրայ տարածուած
գրոյցներ: Ապա մաղթանքներ ըրաւ Վեհ.
Սուլթանին կենաց համար, յորդորելով Ժո-
ղովրդն ալ աղօթելու վասն բարօրու-
թեան եւ արեւշատութեան մեր Օգոստ.
Ինքնակալին: Ի վերջոյ ծանոյց թէ կիրակի
օր երկարօրէն պիտի խօսի եկեղեցւոյն մէջ
եւ քարոզի հրաւիրեց ներկայ բազմու-
թիւնը:

Նրեքշաբթի առաւօտ Խրիմեան Հայրիկ
ընկերակցութեամբ Գեր. Գարեգին վարդա-
պետի Սրուանձտեանց, Գում-գաբու իջնե-
լով, Նրուսաղեմատուն գնաց ուր այցելու-
թիւն տուաւ Ս. Պատրիարք Հօր: Ամեն.
Վեհապետեան եւ Խրիմեան Սրբազանք
յոյժ սիրալիր կերպիւ տեսակցեցան միմ-
եանց հետ իբր երկու ժամ:

— Գոհութեամբ կ'իմանանք թէ Մեծ-
Եպարքոս Սպիտ փաշա հարկ եղած հրա-
մանները տուած է Դատական եւ Կրօնա-
կան գործոց նախարարութեան որպէս զի
Մշոյ եւ Արապկիրի առաջնորդները կարելի
եղածին չափ շուտ վերադարձուին իրենց
վիճակներն:

— Վանէն առնուած լուրերէ ցաւելով
կը տեղեկանանք թէ Պատարագի միջոցին
Էջմիածնի թէ Աղթամարայ կաթողիկոսու-
թիւնն յիշատակելու խնդիրը ծանր համե-
մատութիւններ ստացած է հոն. եկեղեց-
եաց մէջ ազմուկ ծագած է, ոմանք պա-
հանջելով որ «չի յիշուի» Էջմիածին, այլ Աղ-

թամար, եւ այլք ընդհակառէն պնդելով որ էջմիածնայ յիշատակութիւնը լինի միշտ: Այս աղմուկ այնչափ մեծցած է որ կռուոյ կերպարանք առած է եւ ոստիկանութիւնը միջամտելով, կարգ մը ձերբակալութիւններ ըրած է:

— Պ. Գրիգոր Արծրունի Յուրիսէն մեկնած լինելով, այժմ Վիէննա կը գտնուի, ուսկից քանի մ'օրէն կը վերադառնայ ի Տփղիս: Մշակ հրատարակութիւնը շարուկելու համար: Յուրիս Յին ալ պիտի հրատարակուի Արշակունի, ու թամսեայ դադարման պայմանաժամը լրացած լինելով:

— Վանէն կը գրեն մեզ թէ մայիս 22ին, կէս օրին, Մէարիֆի Ժողովոյ Տեսուչն, իւր հետ առնելով Վարչական (Խտարէի) եւ քաղաքապետական Ժողովոց անդամներէն երկու անձինք, քանի մ'ոստիկանաց հետ Վարագի վանքն երթալով փակեր են տեղւոյն տպարանն եւ ապա Քաղաք վերադառնալով փակեր են նոյնպէս Վանայ Կեդրոնական վարժարանը: Թէ՛ տպարանի եւ թէ՛ վարժարանի դռները կնքուեր են: Պատճառն յայտնի չէ:

Մէարիֆի տեսուչը Կեդր. վարժարանը փակած ժամանակ նորա տեսչական փոխանորդին ըսած է թէ, դպրոցը պիտի փակուի առժամեայ կերպով, մինչեւ որ Մէարիֆի Ժողովը դպրոցի ծրագրի եւ ուսուցչական մասին բանակցի Առաջնորդարանին հետ: Յոյս կայ որ նորէն վերաբացուին:

— Կրօնական Ժողովն որ երկուշաբթի օրը դումարեցաւ ընդ նախադահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, ի մէջ այլոց հետեւեալ որոշումները տուաւ: Հինգ եկեղեցականներէ բաղկացեալ Մասնախումբ մը կազմեց որոյ պաշտօնն է հանրային խնդիրներն ուսումնասիրել եւ առաջարկութեան ձեւով իւր տեղեկագիրը մատուցանել Ժողովոյն ի նկատառումն: Որոշեց նաեւ որ Ազգ. Պատրիարքարանի իրաւասութեան ներքեւ գտնուող բոլոր եկեղեցականաց անուանքն աղգահամարի եղանակաւ արձանագրուին մասնաւոր տումարի մէջ եւ տարուէ տարի ամեն Առաջնորդ եւ Վանահայր վախճանելոց եւ նորոգ ձեռնադրելոց անուանքը տեղեկագրէ յԱզգ. Պատրիարքարան

— Կարնեցի Տ. Մելքիսեդէկ քահանայն

որ երկու տարիէ ի վեր հոգեւոր պաշտօնով Ազգ. Հիւանդանոցի մէջ կը գտնուէր եւ վերջերս կը տառապէր կուրծքի հիւանդութեամբ, չորեքշաբթի օրը վախճանեցաւ եւ օծման ու յուղարկաւորութեան հանդէսը կատարեցաւ յաջորդ օրը:

— Վաստահութեան արժանի աղբիւրէ մեզ կը հաղորդեն թէ՛ Ռուսիոյ Հայոց մի քանի եկեղեցականք իրենց պարագլուխ ունենալով զՍուրբիաս եպիսկոպոս Պարզեանց, աղբսագիր մատուցած են Ռուսիոյ Կայսեր, պաղատելով Նորին Վեհափառութեան որպէս զի ի գահ Կաթողիկոսութեան բարձրացնէ Մակար Սրբազանք:

Վերոյիշեալ եկեղեցականք խիղճ չեն ըրած զանազան զրպարտութիւններ յերկրեւոյ ընդդէմ Մելքիսեդէկ Սրբազանի եւ Նմա քուէ տուող աշխարհական պատգամաւորաց: Բայց ո՛չ ապաքէն այդ եկեղեցականք իրենք ևս տուած են իրենց քուէներն առ Մելքիսեդէկ Սրբազան:

Սակայն գրեթէ ապահով կերպով մեզ կը հաղորդուի թէ Նորին Կայսերական Վեհափառութիւն աւելի տրամադիր է վաւերացնել Մելքիսեդէկ Սրբազանի ընտրութիւնը քան Մակար եպիսկոպոսինը:


— Կը լսենք թէ Ամեն. Խորհման Ս. Հայրիկն այս միջոցիս կը պատրաստէ Յիշատակագիր մը, որով պիտի հերքէ իւր վրայօք տարածուած զանազան զրոյցներն, և պիտի հաստատէ թէ ինք բնաւ չէ շեղած կարգապահութեան ու հաւատարմութեան շաւղէն:

ԼՈՅԹԸՆ ԵՒ ԶԻՄՆԵԼ

ՄԹԵՐԱՆՈՅ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԵԱՅ

ՔԻՒՐՔՅԻ ԳԱՔՈՒՄԸ, ՂԱԼԱԹԻԱ



«ՕՐԻԱՆ» Մականուանեալ հնձող մեքե-
նայն երկու ձիով կը քաշուի և կը կշռէ
300 օխա :

ԳԻՆ՝ 35 ՕՍՄ. ՈՍԿԻ Է

Մեքենային կատարելագործութիւնը ե-
րաշխաւորեալ է : Գնողըն երբ գոհ չիլինի,
կրնայ ետ առնուլ իւր ստակն :

502

ՈՒԼՆԻԱ ԿԱՄ ԶԷՅԹՈՒՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ԱԻԱՆ Ի ԿԻԼԻԿԻԱ

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

Տեղ-իւն, Կէնսայան, Բանասերայան և
Լեղոսաբանայան .

Զէյթուն աւանի վրայ մանրամաս-
նօրէն գրուած սոյն ընտիր և ընդար-
ձակ գրքին պահուածներն արկածէ մը
փնտսուած և միայն սակաւաթիւ օրի-
նակներ մնացած են քանի մը գլխա-
ւոր գրավաճառաց և կամուրջի մօտ
հայ ջրավճառաց քով .

Գին 40 զրուշ .

Բ. տպագրութիւն չպիտի լինի մաս-
նաւոր պատճառով :

ՄԻՐԱՆՈՅՇ

(ՎԷՊ ՏԻԿԻՆ ՍՐՔՈՒՀ ՏԻԻՒՍՍԵԻ)

ՏԵՐ Լ ՀԵՐՄԵՆԷԼ

Յ. ԶԷՆՃԻՐՃԵԱՆ

Կը ծախուի բոլոր հայ գրավաճա-
ռաց քով, Բերա, Պ. Ուայսի գրա-
տունը, և Պահճէ-Գարու ջրավաճառ
Պօղոս և Յակոբ Աղաներու խանութ-
ները :

Գին 20 դահեկան արծաթ .

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՊԱՐՈՆ ՇՈՒՊԼԱՆ, խիստ ծիծաղաշարժ
աւ զրօսեցուցիչ վէպ Շարլ Բօլ աը Գոք՝
սահուն ոճով թարգմանեալ ի հայ Ա. հա-
տորն հրատարակուած է և Բ. հատորը մամ-
լոյ տակ : Գին 5 զրուշ :

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, Պոյա-
ճեան տպարանէն ի լոյս ընծայեալ մաքուր
տպագրութեամբ և աշխարհագրական բազ-
մաթիւ քարտէսներով ու պատկերներով .
Գին 25 զրուշ :

ԱՐԿԱԾՔ ԱՆՐՁԱԿԱՆՔ ՄԻՆԵԽՆՆԱՌԻ-
ՋՐՆ ՊԱՐՈՆԻ.—Վէպ գերմանական, թարգմ.
Կ. Ս. Իւթիւճեան. —Գին 3 զրուշ :

ԼԷԹԱՅԻՑԻ ՍՍԱՐ (էքէջէլ քըն-աթ), բա-
րոյական, նկարագրական, գիտական, և
պատմական հատուածներ, խրատներ եւ .
մուրհակներ, պայմանագրեր, նամակներ,
աղերսագրեր. — յօրինեց Միհրան Աբիկ-
եան . — գին 100 փարայ :

ՏԱՐԵՐՔ ՕՍՄ. ԼԵՋՈՒԻ. — (Բ. տպագ-
րութիւն) . — (հէղ. Նոյն) կը պարունակէ օսմ.
պարսկ. և արաբերէն լեզուաց կանոններն
մասնաւոր գրութեամբ մը . — գին 6 զրուշ :

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ
(մտաւոր և գրաւոր . Ա. և Բ. տարիներու
համար) . աշխատասիրեաց Յ. Գ. Փալագաշ-
եան . — Գ. տպագրութիւն, բարեփոխեալ
և յաւելեալ . — գին 3 զրուշ :

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱ-
ՅԱՆԱԿ ԳԱԻԱՌՍ ԱՐԵԼԵԼԵԱՆ Տաճկաստա-
նի, — Տեղագրութիւնը Սարէն և Ձորէն ,

Հնէն և Նորէն, պիտանի գիտնոց (Մ. Կ. Միլախորեանի):—Ա. մաս 8 զրուշ. Բ. մասը 10 զրուշ: Վերջին Գ. մասն ընդ մասլով:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ. Գրադատական, բնական և աստղագիտական, ի պէտս վարժարանաց. —Գրեց Ա. Մ. Գարաջաշեան (Բ. տպագրութիւն) գին 10 զրուշ:

ՏԱՃԿ-ԱՆԳՂ. ԲԱՌԱՐԱՆ. Պայաճեան տպարանէն հրատարակեալ ընդարձակ բառարան: Երկու հատորներն հրատարակուած է: Մէջն մի հատորի գինն է 30 զրուշ:

ԹՈՒՆԱՒՈՐԻՉ ԱՂԶԻԿԸ. — Հետաքրքրաշարժ վէպ Գ. Սարրաֆեանի, Պոլսոյ կեանքէն քաղեալ: Հեղինակը կը խնդրէ մեզէն ծանուցանել թէ իւր վէպի առաջին տպագրութեան մեծ մասն սպառած լինելով, չորս հատորի գինը 20 զրուշէն 10 զրուշի իջուցած է:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ ՀԱՅԱՍՏ. Ա. ԵԿԵՂԵՅԻՈՅ. — Գրեց Գարեգին վրդ. Սրուանձտեանց. — Բ. տպագրութիւն, սըրբազրեալ. (չափ առնողին 1/2 20 զեղչով) — գին 30 փարայ:

Ա. ՏԸՊԷ. — ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՔ ԾԱԾԿԵԼՈՅ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԳՈՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՅ. — Թարգմ. Ն. Ճիվանեան. — գին 15 զրուշ:

ԵՐՈՒԱՆԴ Մ. ՊՈՅԱՃԵԱՆ

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՍԵՒ ԵՒ ՇԱԳԱՆԱԿԱԳՈՅՆ ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐՈՒ

204. — Մահմադ Բաշա Էլ-Է, Էլ- — 204

ՍԵՒ ՆԵՐԿ

Թուրքիոյ մէջ պատրաստուած եւ գործածուած սեւ ներկերուն վրայ իմ կատարելագործեալ բաղադրութեանս առաւելութիւնը յաճախորդք գէթ մի անգամ փորձելով կրնան հասկնալ:

ՇԱԳԱՆԱԿԱԳՈՅՆ ՆԵՐԿ

Կան այնպիսի մաղեր որ ի բնէ շագանակագոյն բայց ճերմակ մաղերով խառն են: Իմ բաղադրութիւնս, որ

տառն վայրկեանի մէջ մաղերն իրենց բնական գոյնին կը դարձնէ, առնուազըն մինչեւ մէկ ու կէս ամիս կրնայ տեւել, առանց անոնց բնական փայլունութիւնը կորսնցնելու, որով կը գերազանցէ Եւրոպայէ եկած սեւ և շագանակագոյն նմանօրինակ ջուրերը, մանաւանդ որ քիմիական բաղադրութեամբ ֆլամակար հետեւանք յառաջ չբերեր բնաւ: Վերոյիշեալ ներկերը գործածելու եղանակին վրայ տեղեկութիւնք կը տրուին վաճառատունէս: Դիմերը յոյժ գոհացուցիչ են:

Շատ գնողներու համար 20 0/0 զեղչ կը լինի: 46—52

1886 տարւոյ ՊԱՐԶ ՕՐԱՅՈՅՅՆ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՅՆ այժմէն պատրաստուելու վրայ լինելով, առեւտրական, արհեստական եւ ուրիշ ծանուցումներ այսօրուքէ կ'ընդունուին:

Առաջնոյն համար, որ 40,000 օրինակ կը ծախուի, ծանուցումնք պէտք է շրջուին մինչեւ Յունիսի վերջն, եւ երկրորդին համար՝ որ 6000 օրինակ կը ծախուի, մինչեւ Յունիսի վերջը:

Դիմել առ Գարեգին էֆ. Պաղտատեան, հրատարակիչ այդ օրացուցից, Պոլիս, Չաքմաքճըլար, 13, Յակոբեան խան:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՅՅԵՏՈՄ ՍԵՐՈՒ

Կը պատրաստուի աղնիւ քարտերու վրայ ամեն լեզուաւ գեղեցիկ գրերով 100 հատը 10 շուրուշ:

Դիմել առ Գարեգին էֆ. Պաղտատեան, Չաքմաքճըլար, Յակոբեան խան թիւ 13:

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼ ԼՐԱԳՐՈՅ